

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ



ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

ԵՐԵՎԱՆ 2000

ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ
ИМЕНИ КОМИТАСА

THE YEREVAN STATE CONSERVATORY
AFTER KOMITAS

СБОРНИК
МУЗЫКОВЕДЧЕСКИХ ТРУДОВ

I

COLLECTED
MUSICOLOGICAL WORKS

I

Издательство "КОМИТАС"
ЕРЕВАН 2000

"KOMITAS" Publishing House
YEREVAN 2000

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

I

«ԿՈՄԻՏԱՍ» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2000

ԴՏՀ 78.03
ԳՄԴ 85.2
Ե 762

Պատասխանատու խմբագիր՝ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խմբագիրներ՝ Ա.ԱՆԱՆՅԱՆ, Ժ.ԶՈՒՐԱԲՅԱՆ
Գրախոսներ՝ Ա.ԲՈՒԴԱԴՅԱՆ, Ա.ՍԱՐՅԱՆ, Ա.ՇԱՄՇՅԱՆ

Ответственный редактор: Н.АВETИСЯН
Редакторы-составители: А.АНАНЯН, Ж.ЗУРАБЯН
Рецензенты: А.БУДАГЯН, А.САРЬЯН, А.ШАМШЯН

Ե 762

Երաժշտագիտական աշխատությունների ժողովածու. - Գիրք Ա. - Եր.: Կոմիտաս, 2000. - 192 էջ:

Երաժշտագիտական հոդվածների ներկայացվող ժողովածուն ընդգրկում է Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսորների և դասախոսների ուսումնասիրությունները երաժշտության պատմության, տեսության և կատարողական արվեստի բնագավառներում: Տեղ է հատկացված կոնսերվատորիայի սկզբնավորման և զարգացման հարցերին, հայ և համաշխարհային երաժշտության արդի խնդիրներին:

Գիրքը հասցեագրված է մասնագետ երաժիշտներին, կոնսերվատորիաների և երաժշտական ուսումնարանների ուսանողներին, ինչպես և պատրաստված երաժշտասերներին:

В публикуемом сборнике музыковедческих трудов профессоров и преподавателей госконсерватории имени Комитаса представлены научные исследования в областях исторического, теоретического музыкознания и музыкального исполнительства. В статьях освещены вопросы становления и развития консерватории, творческого наследия Комитаса, изучения армянского национального искусства в контексте всемирного музыкального процесса.

Книга адресована профессиональным музыкантам, студентам консерваторий и музучилищ, а также подготовленным любителям музыки.

4905000000
Ե 0036(01)2000 2000

ԳՄԴ 85.2

ISBN 99930-804-1-1

© Երևանի Կոմիտասի անվան պետկոնսերվատորիա
© Ереванская госконсерватория им.Комитаса

ՄԱՐԳԱՐԻՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆ ԵՎ ՀԱՅ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Երևանի, Կոմիտասի անունը հայարտությամբ կես դար կրող կոնսերվատորիան բոլորեց իր ստեղծագործական կյանքի 75 տարին: Հրաշալի և կենսակայուն մի տարիք, որն իր մեջ ամփոփում է սովորողների երիտասարդ ավյուրն ու եռանդը, տարբեր սերունդներին պատկանող երաժիշտ-մանկավարժների հարուստ փորձն ու գիտելիքները: Եվ այդպես անցած և գալիք ամեն մի տարի:

Իր 75-ամյա գործունեությամբ կոնսերվատորիան ինքնահաստատվել է 20-րդ դարի ազգային մշակույթի համայնապատկերում որպես խոշորագույն երևույթ: Ապացույցները բազմատեսակ են, բազմանշանակ ու հարուստ:

Պետականության հարյուրամյակների կորստով պայմանավորված կտրվածությունը համընդհանուր քաղաքակրթության մակարդակից հույժ կարևոր դարձրեց փոխհատուցման գաղափարը: Այդ մասին էին երազել ազգի նվիրյալ զավակները, այդ էր կոնսերվատորիայի առաջնահերթ նպատակներից և խնդիրներից մեկը:

Իր սկզբնավորման և ինքնահաստատման ոչ մի փուլում կոնսերվատորիան չի եղել լոկ ուսումնական հաստատություն: Որքան խորհրդանշական էին առաջին իսկ երկու տարիների ընթացքում Հայաստանի տարբեր շրջաններում ժողովրդական երգի գրառումները և անկրկնելի Ռոմանոս Մելիքյանի ոգեշունչ ղեկավարությամբ Մոցարտի Ռեքվիեմի և Բախի սի մինոր մեսսայի հատվածաբար կատարումը:

Իր գործունեությամբ կոնսերվատորիան կոչված էր հանուն ապագայի կամրջել իր անցյալի հարուստ և ինքնատիպ ավանդույթները՝ ներկայի հետ, իր յուրակերպ արևելյան գեղեցիկ նկարագիրը՝ համաշխարհային մշակույթի կուտակած և զարգացող արժեքների հետ: Այդ բարդ և պատվաբեր, ժամանակի առումով շատ դժվարին խնդիրները կոնսերվատորիան փառապանծ լուծեց: Այդ նպատակամետ մեծ աշխատանքի մասնակիցներն են եղել բազմաթիվ մեծաշնորհ երաժիշտներ, իրենց գործին նվիրված հարյուրավոր հմուտ մասնագետներ: Նրանց գերիշխող մասը արժանի է հիշատակման և երախտիքի խոսքի:

Հետապնդելով կենտրոնական և առանցքային խնդիրը՝ ծառայել

ազգային մշակույթին, լինել հայ երաժշտության հիմնական, ուղեցույց հանդիսացող հաստատություն, կոմսերվատորիան իրականացրեց այն մեծ ընդգրկումով և, որ կարևորն է, հեռանկարային: Առաջին քայլերից իր շուրջը համախմբելով, պարզապես «գայթակղեցնելով» իր բարձր նպատակներով, տարբեր մշակութային կենտրոններից մասնագետներ՝ հայ, և ոչ միայն հայ, կոմսերվատորիան շուտով դարձավ հանրապետության կիրթ, բազմակողմանի զարգացած մարդկանց մի համաստեղություն, որոնց մեջ հանդիպում էին և՛ տերմոդինամիկայի մասնագետ, և՛ իրավաբան, և որոշակիորեն իր միկրոկլիման տարածեց մայրաքաղաքում:

Բացառիկ մեծ էր Ռոմանոս Մելիքյանի, այնուհետև Արշակ Արամյանի, Սպիրիդոն Մելիքյանի և Անուշավան Տեր-Ղևոնդյանի կողքին հայ մեծ դասական Ալեքսանդր Սպենդիարյանի ներդրումը կոմսերվատորիայի կյանքում: Պատմաշրջանի գործող երաժիշտներից ամենից հեղինակավորը, նա իր բացառիկ զարգացած իմտելիկտով, մարդկային անզուգական հատկանիշներով մեծապես ներագրեց իր ելիտասարդ գործընկերների վրա:

Հիշենք այն ժամանակահատվածը, երբ կոմսերվատորիան կատարում էր իր առաջին քայլերը: Հանրապետության տարածքում ապրող Մեծ եղեռնից փրկված գաղթականների մեծ զանգվածներ, 29 հազար բնակչություն ունեցող մայրաքաղաքը, որի ապագա կենտրոնական հատկագիծն ստեղծող ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը պատկերացրեց այն լոկ 200 000 բնակչությամբ: Նախանձելի խանդավառությամբ, տնտեսապես քայքայված երկրի մեծ երաժիշտները կոմսերվատորիան դիտեցին որպես մի սրբավայր, ուր սովորելու իրավունք ստացողը պետք է երաժշտությանը ծառայելու երդում տար: Մարտիրոս Սարյանի ձեռքով գծվեց առաջին հնգագլիծ գրատախտակներից մեկը: Կոմսերվատորիայի հավաքաբարը Կենտկոմի առաջին քարտուղարին արգելեց շենք մտնել փոշոտ կոշիկներով :

Կոմսերվատորիան ստանալով իր անվանումը 1923 թվին, անկասկած դեռևս շատ հեռու էր բարձրագույն երաժշտական հաստատություն լինելուց: Գրեթե առաջին երկու տասնամյակների ընթացքում հաղթահարվեց երաժշտական դպրոցի, իսկ այնուհետև և երաժշտական ուսումնարանի մակարդակը:

Սակայն հենց այս սկզբնավորման շրջանում կոմսերվատորիան իր մանկավարժ-երաժիշտների և առավել տաղանդավոր սաների մասնակցությամբ իրականացրեց սիմֆոնիկ նվագախմբի առաջին ելույթները և օպերային ստուդիայի գործունեությունը, որը հիմք ծառայեց Երևանի օպերային թատրոնի ստեղծման համար: Արժանի է հիշատակման 1926-27 թթ. համերգաշրջանում Երևանի կոմսերվատորիայի կվարտետի մասնակցությունը դանիացի խոշորագույն դաշնակահար Էզոն Պետրիի հետ

Շումանի դաշնամուրային կլիմտետի կատարմանը:

Կոնսերվատորիան իր գործունեությունը սկսեց կատարողական բաժինների աշխատանքից, որոնք մինչ այսօր կազմում են և լավագույն ձևով ներկայացնում են ժամանակի մեջ նրա առաջընթացը: Կոնսերվատորիան ապահովեց հանրապետության երաժշտական արվեստի զարգացումը ամենատարբեր օղակներում՝ երաժշտական դպրոցում դասավանդող մանկավարժներից մինչ սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտներ, օպերային թատրոնի մեներգիչներ և նվագախմբի կատարողներ: Առաջին տասնամյակներում իր մեջ բուրդելով երաժշտական դպրոց, ուսումնարան, կոնսերվատորիան 40-ական թվականներին արդեն իրականացրեց բարձրագույն երաժշտական հաստատության խնդիրները:

Եթե Ռոմանոս Մելիքյանի անկրկնելի եռանդով և ներշնչանքով սկիզբ դրվեց երաժշտական ստուդիային, այնուհետև կոնսերվատորիային, ապա Կոնստանտին Սարաջևի գործունեությամբ (1936-37 և 1940-54 թթ.) ստեղծվեց իրական բուհական մակարդակ, ստեղծվեց իրական կոնսերվատորիայի կոնցեպցիան: Անկասկած, այս ճանապարհին գործեցին և՛ փորձված երաժիշտ-մանկավարժներ, և՛ նոր հրավիրված երիտասարդ կարող ուժեր, ինչպես և Հայրենական պատերազմի տարիներին Երևանում գտնվող հայ և այլազգի փորձված երաժիշտներ, որոնց թվում էին աշխարհահռչակ երաժիշտ, դաշնակահար Կոնստանտին Իզումնովը, տավիրահարուհի Քսենիա Էրդելին, որի գործունեությամբ կոնսերվատորիայում սկիզբ առավ տավիրի դասարանը, հանրապետությունն ապահովելով տավիրահարուհիներով: Նկատելի հետք թողեցին դաշնակահար Վլադիմիր Ջելիզերը (Լենինգրադի կոնսերվատորիա), Հենրիխ Նեյգաուզի ասիստենտ Նատալյա Վոլկիսը, ջութակահար Վիտոլդ Պորտուգալովը և ուրիշներ:

Հայ երաժիշտներից կոնսերվատորիայում գործեցին խոշոր տեսարան Բրիստափոր Քուլմարյանը, մեծաշնորհ դաշնակահարներ Ալեքսանդր Դուրլխանյանը, Գրիգոր Դոմբալը: Հայրենականի տարիներին կոնսերվատորիայի հետ էր կապված երաժշտագետ Ալեքսանդր Շահվերդյանը, որը ոչ տևական մանկավարժական գործունեությունից բացի կատարեց շատ ավելի արժեքավոր աշխատանք, կոնսերվատորիայի պատվերով ստեղծելով «Ակնարկներ հայ երաժշտության պատմությանը» (19 - 20-րդ դդ. սկիզբը) որն այդ տիպի առաջին մեծածավալ աշխատությունն էր, մասնագիտական մեծ հմտությամբ և նյութի լայն ընդգրկմամբ ստեղծված:

Հայրենականի տարիներին կոնսերվատորիայի հետ իր գործունեությունը կապեց և շուրջ կես դար շարունակեց Գեորգի Տիգրանովը, որի աշխատանքը՝ Չավեն Վարդանյանի և Կոնստանտին Մելիք-Վրթանեսյանի հետ համատեղ, 1937-1938 թթ. մեծապես խթանեց նոր հիմնա-

դրված երաժշտագիտական բաժնի առաջընթացը:

Մասնագիտական առաջընթացի տեսակետից 40-ականները հուսալի հիմք ստեղծեցին 50-ականներից սկսած և ամեն տասնամյակ անհամեմատ աճող կոնսերվատորիայի սաների հաղթանակների համար համամիութենական, այնուհետև և միջազգային մրցույթներին:

Կոնսերվատորիան հիմնադրման առաջին իսկ օրերից (սկսած Ռոմանոս Մելիքյանից) դիտվել է որպես հայկական, այսինքն, ազգային նկարագիր ունեցող կրթօջախ, որն ամենևին չէր բացառում եվրոպական և ռուսական գեղարվեստական արժեքների յուրացումը և զարգացումը: Դասական եվրոպականը և ռուսականը, ինչպես և ժամանակակիցը եղել են հուսալի ուղեցույցներ: Այլ կերպ ինչպես բացատրել Ռոմանոս Մելիքյանի կողմից իր ղեկավարած երգչախմբի հետ Բախի սի մինոր Մեսսայի և Մոցարտի Ռեքվիեմի հատվածաբար կատարումը: Բայց նույն Ռ. Մելիքյանը ամառվա ամիսներին ստուդիայի սաներին տանում էր Հայաստանի շրջանները ժողովրդական երաժշտության հավաքագրման նպատակով: Նման դիրքորոշումը հատուկ էր նաև կոնսերվատորիայի մյուս ղեկավարներին:

Անվիճելի է, որ ազգի երաժշտական նկարագիրը ստեղծողը առաջին հերթին ստեղծագործությունն է: Ստեղծագործությունն է կանխորոշում այն գեղարվեստական մթնոլորտը, այն արժեքները, որոնք ի վերջո ապահովեցին հայ երաժշտության համաշխարհային ճանաչումը:

1930 թվին կոնսերվատորիայում հիմնադրվեց ստեղծագործական դասարան: Սարգիս Բարխուդարյանի և Հարո Ստեփանյանի ջանքերով կյանք ստացավ ապագայի համար առանցքային նշանակություն ունեցող այս կարևորագույն օղակը: Ս. Բարխուդարյանի և Հ. Ստեփանյանի գործունեությունը տևական չէր, և ստեղծագործական դասարանի իրական առաջընթացը սկսվեց Վարդգես Տալյանի ղեկավարությամբ: Երաժիշտ-մանկավարժի բնական օժտվածությունը, մարդկային բացառիկ նվիրվածությունն իր գործին, տարիների ձեռք բերած փորձը տվեց հիանալի արդյունք: Վ. Տալյանի սաներն էին Աշոտ Սաթյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Առնո Բաբաջանյանը, Էդվարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը, մի փոքր ավելի ուշ՝ Ադամ Խուրդյանը, Երաժիշտներ, որոնք կանխորոշեցին 40-ականներից սկիզբ առնող ազգային երաժշտության մեծ առաջընթացը:

Վ. Տալյանի մահից հետո կոնսերվատորիայի ստեղծագործական դասարանը ղեկավարեցին Գրիգոր Եղիազարյանը, Էդվարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Էդգար Հովհաննիսյանը, Տիգրան Մանսուրյանը և այժմ ավելի երիտասարդ սերնդի կոմպոզիտորներ: Նշված երաժիշտների ջանքերով ստեղծագործական դասարանը և նրա սաները բարձր զնահատականի արժանացան նախ-

կին Խորհրդային Միության առաջատար կոնսերվատորիաների մեջ, մշտապես բոլոր մրցույթներում գրավելով ուշադրություն, արժանանալով մրցույթներում առաջին կարգի մրցանակների՝ առաջին հերթին ազգային ուրույն նկարագրի, ինքնատիպ մտածողության, մասնագիտական հասունության համար:

Կոնսերվատորիայի սաների գործունեությունը մեծապես ընդլայնեց ազգային երաժշտության ժանրային շրջանակները, արտահայտչամիջոցների ողջ համակարգը, կերպարային աշխարհը: Հատկապես 60-ականների վերջին և 70-80-ականներին, երբ կոնսերվատորիայի ղեկը առավել քան քառորդ դար գտնվում էր Ղազարոս Սարյանի հնուտ և իմաստուն ձեռքերում, մեծապես ընդլայնվեցին ազգային երաժշտական աղերսները ժամանակակից երաժշտության հետ (յսկ դրան նախորդեց և՛ Ս. Պրոկոֆևի, և՛ Գ. Շոստակովիչի գեղարվեստական սկզբունքների ստեղծագործական յուրացումը): Զգալիորեն աճեց հետաքրքրությունը հայ միջնադարյան մոնոդիկ մասնագիտական երաժշտության հանդեպ, հանգամանք, որը ազգային նկարագրի կարևոր գործոններից էր:

Ազգային երաժշտության առաջընթացի մեջ իր հավաքական դերը խաղաց ազգային կատարողական արվեստը, որն՝ աճեց, զարգացավ բազմաժանր ստեղծագործությունների մեկնաբանման ճանապարհին: Ստեղծագործողների նոր սերունդներն իրենց հետ բերեցին նոր, հաճախ ոչ ավանդական կազմի կատարողական խմբերի, կամերային կոլեկտիվների գործունեությունը: Ազգայինը ձեռք բերեց նոր, հարուստ երանգներ:

Ազգային ստեղծագործության հետ անմիջականորեն կապված էր և հայ երաժշտագիտությունն իր տարբեր ճյուղավորումներով՝ գիտական, լուսավորչական, երաժշտական-քննադատական: Հեռավոր և մոտիկ անցյալի կողքին մեծ ուշադրություն հատկացվեց ժամանակակից ստեղծագործության խնդիրներին և կրկին լայն ասպարեզ բացվեց կոնսերվատորիայի երաժշտագիտական բաժնի տարբեր սերունդներին պատկանող շրջանավարտների համար:

* * *

Կոմիտասի անվան կոնսերվատորիան իր 75 տարիների ընթացքում շփվել է հայ և ալլազգի մշակույթի բազմաթիվ գործիչների հետ, որոնք նույնիսկ իրենց կարճ այցելություններով, դասատուների և ուսանողության հետ հանդիպումներով, խթանել են, անշուշտ տարբեր ձևով և չափով, կոնսերվատորիայի կյանքը, ընդլայնել հետաքրքրությունների շրջանակը:

Հիշատակենք դեռևս 1926-27 համերգաշրջանում աշխարհահռչակ

դաշնակահար Էզոն Պետրիի ելույթները Երևանում:

Նույն 20-ականներից կոմսերվատորիայի հետ սերտորեն կապված էր մեծն Մարտիրոս Սարյանը: 30-ականներից սկսած և մինչև իր կյանքի վերջին տարիները կոմսերվատորիայի մեծ բարեկամն ու խորհրդատուն է եղել Արամ Խաչատրյանը:

Կոմսերվատորիայի 1942 թվին կայացած ուսանողական առաջին գիտական նստաշրջանի ունկնդիրներից է եղել հոչակավոր գիտնական Հովսեփ Օրբելին: Անմոռանալի պահեր են ապրել կոմսերվատորիայի ուսանողներն ու դասատուները՝ կոմսերվատորիայում հանդիսավոր նըշելով Ավետիք Իսահակյանի ծննդյան 80-ամյակը նրա մասնակցությամբ, սպիտակ ծաղիկներով պատելով նրա ճանապարհը մեքենայից մինչև բեմ: Հույզերի, ապրումների նոր ալիքներ էին կապված այն ժամերի հետ, երբ մենք ընդունում էինք Պարույր Սևակին և Սիլվա Կապուտիկյանին:

Իրենց հյուրախաղերի ժամանակ կոմսերվատորիան այցելել են և հիշարժան պահեր ապրել երգչուհիներ Լուսին Ամարան, Լիլի Չուբարզյանը, Ժիրայր Սերգոյանը, Ջարա Գոլոխանյանը, Իրինա Արխիպովան (Երևանում Գլինկայի անվան մրցույթի անցկացման ժամանակ) և շատ ուրիշներ:

Կոմսերվատորիայի դահլիճում են հանդես եկել ամերիկացի դաշնակահար Բայրոն Չանիսը և Սվյատոսլավ Ռիխտերը, ինչպես նաև Նյու Օռլեան հոյակապ երգչախումբը:

60-ականների ամենավաղ տպավորություններից էր աշխարհահռչակ երաժշտագետ-հանրագիտակ, դաշնակահար և դիրիժոր Նիկոլայ Լեոնիդովիչ Սլոնիմսկու շուրջ չորսժամյա գրույցը, որին բացառիկ ուշադրությամբ ունկնդրող լսարանը մեծ տպավորություն թողեց ամերիկյան հյուրի վրա:

Բազմավաստակ, շնորհազարդ մանկավարժների գործունեությունը տարբեր շրջաններում ապահովել են տարբեր մակարդակի և տարբեր պաշտոններ գրավող վարչական աշխատողները: Անհնարին է տալ բոլոր այն գործիչների անունները, որոնք նպաստել են կոմսերվատորիայի անխափան աշխատանքին:

Շնորհավորելով կոմսերվատորիայի 75-ամյա երիտասարդ տարիքը, հույս հայտնենք, որ ներկա գտնվողներից շատերը կնշեն նրա 100, 125 և այլ ամյակները: Կոմսերվատորիան ապրելու է հայ ժողովրդի և հայ երաժշտության հետ:

Հողվածը գրված է 1976 թվականին:
Հրատարակվում է հետմահու:

ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ

ԿՈՄԻՏԱՆԸ ԵՎ
ԵՐԳՉԱՆՄԱՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ

Հայ երգչախմբային արվեստը զարգացման հետաքրքիր ճանապարհ է անցել և վաղուց արդեն անհրաժեշտ պահանջ է զգացվում հայ երաժշտական մշակույթի այդ բնագավառը արժեքավորող մենագրությունների, պատմական ակնարկների և այլ գիտական ուսումնասիրությունների:

Երգչախմբային արվեստը սկիզբ է առել անհամեմատ ավելի ուշ շրջանում՝ սերտորեն կապված լինելով մեր ժողովրդի ընդհանուր և առանձնապես երաժշտական մշակույթի հետ և բխում է նրանցից: Հայտնի է, որ մինչև 9-րդ դարը հայկական ժողովրդական երաժշտությունը ավանդաբար փոխանցվելով սերնդեսերունդ, բերնեբերան՝ գերազանցապես բանավոր կերպով, անցել է զարգացման պատմական էվոլյուցիա՝ մի քանի հարյուրամյակների ընթացքում:

Կոմիտասի վկայությամբ, խազային նոտագրության արվեստը անցել է իր զարգացման երեք հիմնական շրջանները: Եվ Հայաստանում կիրառության մեջ մտած խազային նոտագրության միջոցով գրի են առնրվել հոգևոր և աշխարհիկ մեղեդիներ, տաղիկներ, երգեր: Սակայն վերջին 2 հարյուրամյակների ընթացքում խազային արվեստի գիտակ վարպետներն աստիճանաբար անհետանում են, իրենց հետ տանելով խազերի ընթերցման գաղտնիքը: Եվ չնայած հայ երաժիշտների ավելի ուշ շրջանի՝ այս խնդրի ուսումնասիրություններին՝ հայկական հին խազերով կատարված գրառումները անմատչելի են և համարյա անընթեռնելի մեզ համար:

Հայ պատմիչներ Մովսես Խորենացու և Փավստոս Բյուզանդի վկայությամբ խմբովին երգեցողությունը գոյություն է ունեցել դեռևս հին ուրարտական ժամանակաշրջանից: Դրա լավագույն վկայություններն են հետագայում ժողովրդական յուրահատուկ քառերականացված տոնախմբությունները (վարդավառ, ջան-գյուլում, ծաղկաքաղ, տրնդեզ) և այլ ժողովրդական և եկեղեցական ծիսակատարություններ, որոնք, ինչպես երաժշտագետ Մ.Մուրադյանն է վկայում, աստիճանաբար պատմական զարգացման ընթացքում մոնոդիկ երգեցողությունից փոխանցվել և ապա ձայնառության ու իմիտացիոն բազմաձայնության զարգացման միջոցով հասել մեր ժամանակակից երգչախմբային բազմաձայն երգեցողության ներկա օրինաչափությանը:

Ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսերին նկատելի աշխուժություն է զգացվում հանդեպ երաժշտական ազգային ֆոլկլորը: Այդ նույն ժամանակաշրջանում հիմնադրված մի շարք դպրոցներ և մշակույթի օջախներ նշանակալից դեր են խաղացել մեր մշակույթի զարգացման և առաջընթացի գործում:

Հայ երաժշտական արվեստի և մշակույթի զարգացման պրոցեսում ակներև է Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1815թ.), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1824թ.), Էջմիածնի Գևորգյան ճեմարանի (1874թ.) նշանակությունը: Այս շրջանի համարյա բոլոր երգահանները եղել են նաև խմբավարներ և դրանց մեծ մասի գործունեությունը պայմանավորված է եղել իրենց իսկ ստեղծած երգչախմբերով, սակայն զարմանալից այն է, որ դրանց գերակշռող մասը եղել են դիրիժոր-խմբավարներ՝ ինչպես ասացինք, առանց խմբավարական մասնագիտական կրթության (Քրիստափոր Կարա-Մուրզա, Մակար Եկմալյան, Մեծն Կոմիտասը, հետագայում Գրիգոր Սյունի, Սպիրիդոն Մելիքյան և ուրիշներ): Հիրավի, Կարա-Մուրզան առաջինն էր, որին վիճակված էր հայ բազմաձայն խմբերգային արվեստի դրոշը կրելու, որպեսզի այն հանձներ իր հաջորդներին՝ Մակար Եկմալյանին և առանձնապես Կոմիտասին, որը հանդիսացավ հայ երաժշտական արվեստի պատմության մեջ դարագրչուխ կազմող մեծություն: Լինելով երևույթ և բացառիկ անհատականություն, Կոմիտասն իր երաժշտության մեջ կարծես արծարծեց հայ ժողովրդի կյանքը՝ իր պատմական որոշակի շրջանում: Նա առաջինն էր, որ հենվելով հայ երաժշտության խոր և բազմակողմանի ուսումնասիրության վրա, առաջ քաշեց հայ երաժշտության ինքնուրույնության կարեվոր թեզը և կանխորոշեց ազգային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման ուղիները: Կոմիտասը ժողովրդական երգերի գրառման ժամանակ ուներ իր կոնկրետ գեղագիտական և գիտական դիրքորոշումը: Իր «Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը» դասախոսության մեջ, որի սղագրությունը տպագրվել է «Մշակ» շաբաթաթերթի 1905թ. 65 և 66 համարներում, բնորոշելով հայկական ազգային, ժողովրդական երաժշտությունը, Կոմիտասը գրում է. «Ազգային երաժշտությունը, ազգային ժողովրդական երգերը արդյունք են նրա հարազատ լեռների, խոր ձորերի ու դաշտերի, պատմական հազար ու մի դեպքերի ու անցքերի, ժողովրդի ներքին ու արտաքին կյանքի, - այս բոլորը նյութ են կազմում ազգային երաժշտության, մի խոսքով՝ այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարանների ու մտքի վրա»:

Կոմիտասի գիտնական, ազգագրագետ և բարձրաճաշակ արվեստագետ լինելու հանգամանքը մեկ անգամ ևս ընդգծվում է նրանով, որ նա ժողովրդական երգը դիտում էր իբրև բանաստեղծության ու մեղեդի-

¹ Կոմիտաս: Հոդվածներ և ուսումնասիրություններ: Ժողովածու: Երևան, «Պետհրատ», 1941, էջ 28-29:

ակառուցման անբաժանելի միասնություն, մի բան, որ շատ ուրիշների կողմից ըստ ամենայնի չի ընկալվել: Երգչախմբային արվեստը ժամանակի կենդանի տարեգրությունն է, պատմության ձայնը և ժողովրդի ձայնը, արտացոլում է ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նրա հոգևոր կյանքը: Կոմիտասը համաճարեղ արվեստագետի խորաթափանցությամբ ըմբռնեց բազմաձայնության նշանակությունը հայ ազգային երաժշտության ձևավորման մեջ և իրավամբ համարվում է հայ բազմաձայն երաժշտական արվեստի հիմնադիրներից՝ անհասանելի բարձրության հասցնելով այն:

Խոսելով գեղջուկ պարերգերի մասին, Կոմիտասն ընդգծել է բառերի կարևոր դերը եղանակի ստեղծման ու պահպանման մեջ: Նրա կարծիքով, պարերգերն իրենց բովանդակության համաձայն ունենում են և համապատասխան երաժշտական արտահայտչություն: Նա այդ առթիվ գրում է. «...Երբ պոկ է գալի մի եղանակ իր բուն և հիմնական բառերից, կորցնում է հավասարակշռող նեցուկը, կանգուն պահող հենարանը, նա անհայտանում է»¹:

Առհասարակ, Կոմիտասի ընկալումները խոսքի և երաժշտության միասնության վերաբերյալ շատ ավելի խոր հիմքեր ունեն: Նա է, որ գրում է, թե «ժողովուրդը երգում է այնպես, ինչպես խորհում է և խոսում: Երգը և խոսքը միատեսակ կարողություն են, որքան լավ խորհի մարդը, այնքան լավ կխոսի և կերգի: Խոսքն ու ձայնը, բանաստեղծությունն ու երաժշտությունը իբրև երկվորյակ քույրեր, բխում են անսպառ կերպով ժողովրդի մտքից ու սրտից»²: Խոսելով «Հազար ու մի խաղ» երգարանի նյութերի մշակման ընթացքում ձեռքի տակ ունեցած 25 հազարից ավելի քառատողերի ընտրության, բաղդատման մասին, Կոմիտասն ասում է, թե. «...ժողովուրդը սովորաբար մի տուն միայն երգում է որևէ եղանակով և ապա իրեն ծանոթ քառատողերից, առանց մտքին ուշադրություն դարձնելու, շարունակության մեջ երգում է անխտիր այս կամ այն քառատողը: Մենք աշխատել ենք հաջորդ տների ընտրությունն այնպես անել, որ բոլորը միասին, որքան կարելի է մի ամբողջություն կազմեն և հարմար լինեն եղանակին և կրկնակների իմաստին»³:

Դասակարգելով ժողովրդական երգաստեղծության ժանրերը, Կոմիտասը յուրաքանչյուրին իր սպառիչ բնորոշումն է տվել: Պատահական չեն հարսանեկան երգերի նրա գնահատականները, որոնցից մեկը մենք գտնում ենք և 1905թ. Թիֆլիսում կարդացած իր զեկուցման մեջ: Նա ասում է. «...Հարսանեկան երգերը բազմատեսակ են և խորհրդավոր: Նրանց թիվը առայժմ հասնում է 78-ի...»: 1913թ. դրանց թիվը համարվել է

¹ Կոմիտաս: Հոդվածներ և ուսումնասիրություններ: Ժողովածու: Երևան, «Պետհրատ», 1941, էջ 24:

² Կոմիտասական: Երևան, «ՀՀ ԳԱ», 1969, էջ 13-14:

³ Նույն տեղում, էջ 28:

100-ը:

Հարսանեկան արարողության բազմակողմանի արտահայտությունները ներկայացնող երգեր ենք գտնում Կոմիտասի տարբեր ժողովածուներում: «Ակնա երգերի շարում», որ պարունակում է ընդամենը 25 երգ, տեղ են գտել և հարսանեկան երգեր: Անդրադառնալով այդ երգերի էությանը, երաժշտագետ Ռ.Աբայանը գրում է. «Եղանակները, որոնք այստեղ ներկայացված են Արարատյան դաշտի ժողովրդական լեզվին հատուկ ելևէջային պարզությամբ, ընդհանրապես գյուղական երգերի ոճական հարազատությամբ, միևնույն ժամանակ բնութագրական են իրենց ավանդականությամբ: Որոշ երգերի մոտ կան Կոմիտասի նշումները՝ «միացնել միջից», «միացնել, մի եղանակ դարձնել»: Այդ երգերից մի քանիսը ընդգրկված են Կոմիտասի հարսանեկան երգերի Ա/շարում»: Մեկ այլ ժողովածուում, որն ըստ պրոֆեսոր Աբայանի, բաղկացած է 238 երգերից, 12 կտորով ներկայացված է հարսանեկան երգերի ժանրը: Եթե ի նկատի ունենանք, որ այդ ժանրի երգեր հանդիպում ենք ոչ միայն ժողովածուներում, այլև Կոմիտասի առանձին գրառումներում, ապա հասկանալի է դառնում, թե Կոմիտաս գիտնականի համար որքան կարևորություն է ունեցել այս ժանրը - ժողովրդի կյանքն ու կենցաղը, բայց և հոգևոր-բարոյական կերտվածքը ներկայացնելու տեսակետից: Հարսանեկան ծիսական երգերը, որոնք միավորված են մեկ ժանրում, հենց Կոմիտասը տեմպի և կատարման եղանակի իր դիպուկ բնորոշումներով «միջակ-չափավոր», «հորդոր», «աշխույժ և հոժար», ինչպես նաև երգի բնույթին հատուկ խառն ու բարդ մետրերի հիման վրա ստեղծում է սահուն ընթացքով ծավալվող ռիթմական պատկերներ: Այս երգերը առանձնահատուկ են նաև իրենց կառուցման և զարգացման սկզբունքներով:

Ծիսական երգերից հետաքրքրական նորույթ է նաև երեք խմբերգերից բաղկացած «Վիճակի շարը» («Երկնքի աստղերը», «Հեյ գյուլ են», «Ծաղիկ ունեմ նարնջի»): Առաջին խմբերգը գրված է իգական կազմի, երկրորդը՝ արական, իսկ երրորդը՝ խառը կամ երկսեռ կազմի համար: Տեմպի և տեմբրի հակադրությամբ Կոմիտասն այս երեք խմբերգերում հասնում է մի ամբողջության:

Ծիսական-հարսանեկան երգերը երգվել են հարսանեկան զանազան արարողությունների ժամանակ: Հետաքրքիր են նաև այս շարքում այն երգերը, որոնք կրում են «Ծաղկոց» անունը: Այս երգերը երգել են հարսնացուի մոտ ընկերուհիները, նրա գովքն են արել, մամեցնելով նրա կյանքը ծառի, ծաղկի, լուսնի և այլն: Իսկ այլ երգեր այս շարից վերաբերել են փեսային, նորասպակների ծնողներին, ընկեր-ընկերուհիներին, հարսանիքի մասնակիցներին: Մի քանիսն էլ զվարճալի երգեր են և

¹ Կոմիտասական: Երևան, «ՀՀ ԳԱ», 1969, էջ 13-14:

հանելուկներ: Կոմիտասը բացառիկ խնամքով և ճաշակով գրի առնելով «ծաղկոց» երգերը, նպատակ էր դրել սյուիտների միջոցով վերարտադրել հարսանեկան ծեսի բոլոր մանրամասները: Մինչև 1960-ական թվականները հայտնի էր միայն մեկ սյուիտ՝ վերնագրված «Հարսանեկան երգեր», որը հրատարակվել էր Փարիզում 1936թ.: Սկզբնական վիճակում այդ խմբերգերը ունեցել են հետևյալ հերթականությունը և անվանումները. «Փեսին արդուգարդ», «Մաղթանք», «Աղոթք», «Փեսին գովքը», «Կատակ», «Շուրջպար»: Այս երգերից առաջինը արտացոլում է փեսային հագցնելու ծեսը: Զայնառության և ինիտացիոն կրկնությունների օգնությամբ ստեղծված է հարց ու պատասխանի վրա հիմնված կենդանի մի պատկեր, որի ընթացքում զվարթ տրամադրությունը գերիշխում է սկզբից մինչև վերջ:

Մեր թագվորին ի՞նչ պիտի, ի՞նչ պիտի,

Մի քաթան շապիկ պիտի:

Մեր թագվորին ի՞նչ պիտի, ի՞նչ պիտի,

Մի քիրման գոտիկ պիտի:

..... *այնուհետև*

Մի գույզ գուլպա պիտի:

.....

Մի գույզ լավ կոշիկ պիտի:

Ռ.Աթայանի խմբագրությամբ այս խմբերգը կոչվում է «Մեր թագվորին ի՞նչ պիտի»: Հաջորդող խմբերգերը նվիրված են փեսայի ծնողների հրավիրմանն ու շնորհավորանքներին, փեսայի գովաբանությանը, կատակային տրամադրությամբ, որը բերում, հանգեցնում է եզրափակիչ «Շուրջպարին» կամ «Թագվորի մեր, դուս արի» խմբերգին, որտեղ դիմելով թագվորամորը, անգուսպ կատակների միջոցով բնութագրում են հարսին.

Թագվորի մեր, դուս արի,

Տես քե ինչե՞ր ենք բերե,

Թագվորի մեր, դուս արի,

Քե ջուր բերող ենք բերե:

.....

Քե կով կըթող ենք բերե,

.....

Քե քաղղ ավլող ենք բերե,

.....

Քե գլուխ դըմբող ենք բերե:

Հետագայում այս սյուիտում ավելանում է ևս երեք խմբերգ, որը և ներկայացված է Կոմիտասի երկերի ժողովածուի 3-րդ հատորում: Այսպես՝ «Շարքի» մեջ մտնող խմբերգերը սերտորեն շաղկապված են միմյանց հետ իրենց բովանդակությամբ և միաժամանակ կազմում են հակադիր տրամադրությունների միասնություն: Լուրջ ու խոհական հատվածներին հետևում են ուրախ ու կատակային բնույթի հատվածները և ամբողջ շարքն ավարտվում է հարսանքավորների կատակային շուրջպարով: Հատկանշական է նաև, որ եթե առաջին մասերում Կոմիտասը դիմել է բազմաձայնության իմիտացիոն և պոլիֆոնիկ այլ ձևերի, ապա եզրավակիչ խմբերգում նա դիմել է ամբողջ երգչախմբի ուղղահայացակորդային հարմոնիկ հնչողության՝ կամենալով շեշտել հարսանքավորների միահանուտ առույգ տրամադրությունը:

Կոմիտասի սևագիր ձեռագրերը ուսումնասիրելիս, ինչպես նշեցինք, պրոֆեսոր Ռ.Աթայանը հայտնաբերեց Կոմիտասի մշակած հարսանեկան երգերի երկրորդ շարքը, որ նա գրել է Պոլսում՝ 1911-12թթ., բաղկացած վեց խմբերգերից: Դրանք նույնպես արտացոլում են հարսանեկան ծեսի տարբեր դրվագներ և պատկանում են ժողովրդական ստեղծագործության անգերազանցելի նմուշների թվին՝:

Դրանք են՝ «Երկնից-գետնից», «Մերիկ ջան հալալ», «Թագվորի մեր, դուս արի», «Թագվոր բարով», «Էն դիզան» և «Առնեմ երթամ իմ յարը» խմբերգերը, որոնք ցայտուն կերպով արտացոլում են հայկական ժողովրդական երգի ժանրային բազմազանությունը:

Կոմիտասի մեծագույն ծառայությունը հայ երգչախմբային արվեստի բնագավառում բազմաձայնության պոլիֆոնիկ սկզբունքի հիմնավորումն է: Կոմիտասը արտահայտեց իր ժողովրդի առաջադիմական ձգտումները, ընդհանրացրեց ժողովրդական ստեղծագործության դարավոր փորձը: Նա հայ գեղջուկի ստեղծագործությունը բնորոշեց որպես ազգային մշակույթի ամենատիպիկ և ամենակարևոր մաս: Կոմիտասի խմբերգային գլուխգործոցների հիմքը ժողովրդական (գեղջկական) երաժշտությունն է, որը ստանում է նոր բովանդակություն՝ ապշեցնելով իր ներգործության արտասովոր ուժով:

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Մակլերը, ներկա գտնվելով 1914 թ. Փարիզի երաժշտական կոնգրեսում, ուր հավաքվել էին աշխարհի առաջատար երաժշտագետները, գրել է. «Կոմիտասը հայ ժողովրդական և հոգևոր երգերից մի համերգ տվեց, հիացնելով ներկա գրոնվող կոմպոզիտորներին: Ժողովրդական երաժշտությունը, ինչպես նաև արորի, խոփի, գութանի երգերի մասին տված նրա դասախոսությունները պիտի ասել, համագումարի նիստերից ամենից թանկագինը եղան: Իսկ երբ Կոմիտասը նստեց դաշնամուրի մոտ, մեղմորեն երգելու հայկա-

¹ Կոմիտաս: Երկերի ժողովածու, 3-րդ հ.: Երևան, «Հայաստան», 1969:

կան երգ, ունկնդիր հասարակությունը քարացած մնացել էր և այնտեղ տիրեց այն վեհապանձ հմայքը, այն գերագույն պարզությունը, որ բխում էր հայկական երաժշտությունից»¹:

Տարիներ շարունակ ուսումնասիրելով ժողովրդական երգը, նրա ոգին, մեղոդիկ և ռիթմիկ առանձնահատկությունները, Կոմիտասը հիմք դրեց պոլիֆոնիկ, բազմաձայն երաժշտական ոճին, հաշվի առնելով երգի բնությունը, միջավայրը, կառուցվածքը, գաղափարական, գեղարվեստական բովանդակությունը: Հմուտ խորաթափանցությամբ օգտվելով ընդհանուր եվրոպական երաժշտության փորձից և երաժշտաարտահայտչական միջոցներից՝ Կոմիտասը մեծ զգուշությամբ և ակնածանքով դրանք զուգորդել է հայ ժողովրդական երաժշտության հետ:

Կոմիտասի ստեղծագործական ժառանգության մեջ առանձնակի տեղ ունեն ժողովրդական աշխատանքային խմբերգերը, որոնք բնորոշ գծերով պատկերում են հայ գյուղացուն, նրա կյանքն ու աշխատանքը, նրա պայքարը բնության դեմ: Ժողովրդական աշխատանքային երգերը՝ «Կալի երգ», «Երկրագործի երգ», «Գութաներգ», «Քարհան» և այլն, Կոմիտասի գրչի տակ դարձել են երաժշտական ստեղծագործության խկական գոհարներ: Դատելով Կոմիտասի խմբերգերի բազմաթիվ հատորներում խնամքով ներկայացված միևնույն խմբերգերի բազմաթիվ տարբերակներից, կարելի է համոզմունք հայտնել, որ Կոմիտասի՝ որպես կոմպոզիտորի գրչի տակ ժողովրդական երգերը դարձել են անգուգական խմբերգային պարտիտուրներ, և որ այդ ստեղծագործությունները նրանից պահանջել են ուշադրության լարում, ուժ և եռանդ: Նա երգչախմբի արտահայտչական հնարավորությունը բարձրագույն կատարելության հասցրեց: Եվ պատահական չէ, որ Կոմիտասը մեծ ուշադրություն էր նվիրում առանց նվագակցության երգեցողությանը: Բազմազան են Կոմիտասի այս ասպարեզում գտած հնարները, որոնց շնորհիվ նրա ամեն մի խմբերգ ներկայանում է որպես ակապելլա ոճի մի նոր ու անկրկրներից մուու: Խմբերգային գրության մեջ նա մշակեց ու բարձր զարգացման հասցրեց պոլիֆոնիայի ու հարմոնիայի իր ինքնատիպ արվեստը:

Կոմիտասը հայ երգը մշակեց և հասցրեց դասական այնպիսի մի աստիճանի, որ այն ճանաչելի դարձավ այլ ժողովուրդների կողմից ևս: Իր իսկ՝ Կոմիտասի խոսքերով ասած. «Բազմաձայն երաժշտությունը ոչ թե զանազան ձայների ծեփ է, այլ ստեղծագործություն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել բազմաձայնություն, հային հատուկ ոճ ու ոգի, ապա հետո ընդհանրացման մասին մտածել, որովհետև երաժշտությունն էլ լեզվի պես ունի իր քերականական օրենքները՝ որոնք զանազան են տարբեր ազգերի համար»²:

¹ Խ.Սաֆարյան: Կոմիտաս սրանչելագործ: Երևան, «Գրականության և արվեստի բանձարան», 1999, էջ 333:

² «Անահիտ» հանդես, 1932, Փարիզ:

Կոմիտասը հատկապես իր խմբերգերով մեզ մեծ ժառանգություն բողեց, որոնք չափազանց խորիմաստ և միաժամանակ գեղարվեստական պարզ ու կատարյալ ազգային կերպարներ են՝ իրենց ներգործության մեծ ուժով՝ ողբերգական «Գարուն ա»-ից մինչև աշխատանքային «Լոռու գութաներգը», կատակային-լիրիկական «Խոսմարից» մինչև անգութական «Առավոտուն բարի լուսը», լուսավոր-քնարական «Կուժն առա»-ից մինչև մարտական «Միփանա քաջերը»: Հասպա հոգևոր երկերն ու նրա գլուխգործոցը հանդիսացող «Պատարագը», որը առանձին մի գիտական ուսումնասիրության նյութ է:

Կոմիտասի խմբերգերը դարձան հայ դասական երաժշտության փայլուն նմուշներ, որոնք պատմական մեծ նշանակություն ունեն հայ երգչախմբային արվեստի բնագավառում և իրենց բարձր գեղարվեստական արժեքը պահպանելու են հարատև:

Մեծ է Կոմիտասի դերը հայ երաժշտության պատմության տարեգրության մեջ: Այս միտքը հաստատում է մեր դարի խոշորագույն կոմպոզիտոր Գ.միտրի Շոստակովիչի խոսքը Կոմիտասի մասին. «Կոմիտասը ոչ միայն մեծ կոմպոզիտոր էր, նա նաև ականավոր երաժշտագետ էր, հիանալի ազգագրագետ, և այս բնագավառում նրա ծառայությունը դժվար է գերազնահատել: Նրա երաժշտությունն ապրում է և հավերժ կապրի Մեծ երաժշտության մեջ»:

Բազմադարյա հայ երաժշտության պատմության մեջ հազիվ քե գտնվի մեկ ուրիշ գործիչ, որն օժտված լինի այդպիսի բազմատեսակ ընդունակություններով, նման փառահեղ բարեմասնություններով և ունենա այնքան մեծ երախտիք, ինչպես Կոմիտասը: Անհնար է պատկերացնել մեր ազգային, ժողովրդական, հոգևոր և պրոֆեսիոնալ երաժշտական մշակույթի զարգացման պատմական օրինաչափությունները, առանց հաշվի առնելու Կոմիտասին և նրա թողած մեծարժեք ժառանգությունը, որն իր պատվավոր տեղն է գրավում մեր ազգային և համամարդկային դասական երաժշտության զանձարանում:

¹ Խ.Սաֆարյան: Կոմիտաս սրանչեղագործ: Երևան, «Գրականության և արվեստի բանգարան», 1999, էջ 337-338:

ЭДУАРД ПАШИНЯН

ПОЛИЛАДОВО-ПОЛИТОНАЛЬНОЕ
ПОЛИМОНОДИЧЕСКОЕ НАЧАЛО -
ОСНОВА МНОГОГОЛОСИЯ
ХОРОВЫХ ПРОИЗВЕДЕНИЙ КОМИТАСА

Трудно в многогранной деятельности Комитаса - композитора, хормейстера, этнографа, историка и теоретика музыкального искусства, пропагандиста, просветителя - выделить наиболее важную сторону, но, безусловно, одной из актуальнейших является осознание и практическое претворение оригинальной системы полиладово-политонального полимонодического многоголосия, органически связанного со структурно-интонационными особенностями монодических ладов армянской народной песни.

Ещё в конце прошлого столетия композитор высказывал ту мысль, что не следует искать в основе ладов родного национального искусства европейский мажор или минор. "Не найдёте, потому что их нет," - писал Комитас¹. Он утверждает, что ряд сцепленных одинаковых тетрахордов организует тот звукоряд, на который и опираются лады народной музыки.

Подобный подход в ту пору, на фоне процветающего европоцентристского мажоро-минора, захлёстывавшего национальные особенности искусства, был смелым и оригинальным. Он стал краеугольным камнем теоретических изысканий Х.С.Кушнарера в его капитальном труде "Вопросы истории и теории армянской монодической музыки".

Проблема создания многоголосия на основе монодической культуры весьма сложна. Отсутствие опыта, теоретических изысканий и обобщений в данной области для её разрешения требовали больших знаний, тонкого музыкального вкуса, аналитического мышления. Глубокий знаток народной музыки и высокообразованный профессиональный музыкант, - Комитас² не мог не видеть отсутствия стилистического единства между

¹ Комитас. Песнопения св. литургии. Эчмиадзин, "Арагат", 1898, переизд. сб. "Статьи и исследования", Ереван, 1941.

² Комитас окончил в Берлине консерваторию Рихарда Шмидта (ученика З.Дена).

европейской мажоро-минорной системой и монотоникальными ладами армянской народной песни. Однако огромная практика западноевропейского музыкального искусства диктовала ту мысль, что если функциональное гармоническое, полифоническое мышление в октавных мажоро-минорных ладах является результатом осознания в процессе исторического развития внутренних закономерностей диатонических ладов народной музыки, то и диатоника армянской песни не может не иметь присущую ей систему организации многоголосия с характерной для неё функциональностью. Необходимо было к монодии присоединить такое многоголосие, в котором на основе ладового единства органически сочетались бы гармоническое и полифоническое начала. И Комитас разрешил эту задачу с позиций полиладово-политональных полимонодиических фактурных образований - передовых тенденций музыки XX века, проложив прочные пути для дальнейшего развития национального профессионального композиторского музыкального искусства.

Настоящая статья посвящена изучению вышеуказанных принципов организации многоголосия в хоровых произведениях композитора, рассматривая их с позиций универсальной суперладовой тональной системы, в основе которой лежит диатонический квартовый звукоряд, развёрнутый до функционально и энгармонически замкнутого круга.

Опираясь на ряды сцепленных одинаковых ионийских, дорийских или фригийских тетракордов, лады в данной системе, как известно, являются биладовыми, централизуя вокруг монотоники гипоионийский лад с миксолидийским, гиподорийский - с эолийским, гипофригийский - с локрийским. Таким образом, одноголосные мелодии народной песни в квартовом звукоряде уже полиладовы. Наряду с многими достоинствами монотоникальных ладов, Комитас не мог не замечать и определённых преимуществ и октавной системы ладов в плане более широкого расположения аккордов в силу функционального тождества повторяющихся звуков. Для решения этой проблемы, т.е. создания октавности в неоктавных ладах, Комитас применяет октавное перемещение монотоникального ладового центра с окружающим его звуковым комплексом. Благодаря этому образуются октавно соотносящиеся функционально равнозначные ладотональные центры, вокруг которых развёртываются перемещённые октавами вверх и вниз монотоникаль-

ные биладовые системы народной музыки, излагая сочетающиеся монодии. Именно поэтому многие хоровые произведения композитора завершаются унисоном, октавой, октквинтдецимаккордом (двойной октавой). Этот принцип фактически воспроизводит исторический путь становления октавности.

Концентрируя двухголосие вокруг определённого монотонального центра, Комитас верхний голос располагает в сфере основного лада (выше тоники), а нижний голос - гиполада (ниже тоники). Поэтому верхний голос имеет нисходящую направленность, а нижний голос - восходящую. Таких октавно соотносящихся пар бывает и две, и три. В шестиголосном хоре "Аравотян бари луйс", написанном в гиподорийско-золийской биладовой системе, соло тенора изложено в золийском ладе ля (в малой октаве), партия сопрано и альтов - в гиподорийском ля (в первой октаве), партия первых басов - в гиподорийском ля (в малой октаве), а вторых басов - в золийском ладе ля (в большой октаве).

Кроме вышеуказанных унисона, октавы и октквинтдецимаккорда, Комитас обращается и к другим тоническим опорам, созвучиям, которые с первой ступенью лада составляют консонанс и могут войти в единый устойчивый тонический комплекс. Таким опорным центром становится пятая ступень лада. Её роль в своеобразной комитасовской октавной системе двойственна. Располагаясь между двумя функционально равнозначными октавно перемещёнными тоническими центрами, пятая ступень лада может подчиняться как той, так и другой. В отношении вышележащей тоники она выполняет функцию нижней пятой ступени, поэтому опирающаяся на неё мелодия, развёртывающаяся по характерному для этой сферы звукоряду, в ладовом отношении идентична основной (одноладовой), так как соотношение между ними квартовое.

Если новой опорной зоной становится сфера верхней от тоники пятой ступени, то опирающаяся на неё мелодия, развёртываясь по характерному для этой сферы звукоряду диатонической сверхоктавной тональной системы, в ладовом отношении не идентична основной мелодии (разноладова), ибо их соотношение квинтовое.

Октавно сочетающиеся основные ладовые центры вместе с расположенной между ними опорной пятой ступенью структурно составляют квинтоктаккорд. Все вышеуказанные тонические устои (унисон, октава, октквинтдецимаккорд, квинтокт-

аккорда) Комитасом применяются при обработке мелодий, написанных в гиподорийско-эолийском ладе. При этом квинтовый тон тонического квинтоктакорда приобретает тоникальность, и на его основе в побочной доминантовой (чаще нижней) тональной сфере излагается новое мелодическое образование. Таким образом возникает единый битонально-биладовый комплекс (см. хоры "Ов арек сарер джан", "Екек тесек инчн э кере зинч" и др.).

Значительное место в творчестве Комитаса в качестве объединённого полиладово-политонального тонического центра отводится мажорному трезвучию. Это наиболее совершенное созвучие композитором трактуется не только как тоника гипоионийско-миксолидийского лада, но и как сложная централизованная устойчивость, которая охватывает по ладовым мелодическим функциям составных тонов вокруг основного тона гипоионийско-миксолидийский лад, вокруг терцового тона - верхнедоминантовый гиподорийско-эолийский лад (реже нижнедоминантовый гипоионийско-миксолидийский).

Таким образом, при многоголосной обработке мелодий, написанных в гипоионийско-миксолидийском ладе, ладотонально четырёхголосие сосредоточивается следующим образом: основная мелодия в вышеуказанном ладе - в сопрано (в смысле гармонического четырёхголосия), партия басов - в той же ладотональности, из средних голосов один опирается на верхнемедиантовый гипофригийско-локрийский лад, а другой - на верхнедоминантовый гиподорийско-эолийский или на нижнедоминантовый гипоионийско-миксолидийский лад. При трёхголосном изложении отсутствует вышеизложенная доминантовая сфера.

Ввиду того, что тоническое трезвучие гипофригийско-локрийского лада уменьшенное, Комитас, мелодии, написанные в этом ладе, трактует как верхнемедиантовую сферу гипоионийско-миксолидийского лада, расположенного большой терцией ниже, а остальные голоса - согласно трижды биладовому тритональному организационному принципу гипоионийско-миксолидийского лада, с той лишь разницей, что здесь уже сопрано излагают основную мелодию в верхнемедиантовом гипофригийско-локрийском ладе, партии альтов и басов централизуются большой терцией ниже в гипоионийско-миксолидийском ладе, а партия теноров - в верхне или нижнедоминантовом (по отношению к басам) ладе. В этом случае за-

ключительное устойчивое трезвучие является тоникой гипоионийско-миксолидийской ладотональности, взятой в мелодическом положении терцового тона и с удвоением основного тона.

Правда, в отдельных случаях Комитас стремится подчеркнуть и основной гипофригийско-локрийский монотональный центр, заменяя уменьшенное трезвучие мажорным. Так, в "Гутанерге", основная мелодия которого изложена в гипофригийско-локрийской ладотональности ля, первый куплет завершается расположенным большой терцией ниже фа мажорным трезвучием, а второй куплет - ля мажорным.

В мужском хоре "Ах, марал джан" первые тенора излагают основную мелодию гипофригийско-локрийской ладотональности до диез; вторые тенора - в гипоионийско-миксолидийской ладотональности ля, в той же ладотональности - партия басов, а тенора - в верхнедоминантовой по отношению к басам гиподорийско-эолийской ладотональности ми.

Подобный подход может вызвать и возражение, мотивированное тем, что в данном хоре имеется лишь одна гипоионийско-миксолидийская ладотональность ля с её аккордикой с отклонением в субдоминанту. Нам представляется, что политональность в объединяющих гармонических последовательностях маскируется, но не исчезает, кроме того, противопоставлять здесь монотональность политональности не следует.

Нельзя не согласиться с мнением Ю.Н.Тюлина о том, что "...тональную самостоятельность пластов слух не может легко оценить при непосредственном, прикрывающем их подчинении объединяющему началу, но она легко обнаруживается при выделении каждого пласта. К последнему мы будем прибегать в анализе примеров, так как оно и показывает наличие политональности, таящейся под покровом этого объединения, и принципиальные возможности её использования. Ведь обнаружение скрытых музыкальных закономерностей, нелегко уловимых непосредственным восприятием, является одной из основных задач теоретического музыкознания"¹.

Итак, резюмируя всё вышеизложенное, отметим, что Комитас при многоголосной обработке мелодий, написанных в гиподорийско-эолийском ладе, голоса централизует вокруг то-

¹ Ю.Тюлин. Современная гармония и её историческое происхождение. Сб.ст. "Теоретические проблемы музыки XX века". М., "Музыка", 1967, с.1.⁵⁰

нического унисона, октавы, октквинтдецимаккорда и квинт-октаккорда. Обработывая же мелодии, написанные в гипофригийско-локрийском и гипоионийско-миксолидийском ладах, голоса сосредоточиваются в ладотональностях составных тонов тонического мажорного трезвучия последнего из указанных ладов, создавая трижды биладово трёхтональную многоголосную фактуру. Поскольку один из верхних голосов при этом излагается в верхнедоминантовом гиподорийско-эолийском ладе, естественно, возникает возможность мелодии, написанные в данном ладе, также обрабатывать с позиций полиладово-политональной системы Комитаса. В этом вопросе подобного подхода у него, как правило, нет (так завершается "Антуни"). Однако нам он представляется перспективным, ибо даёт возможность все три вида возможных в диатоническом квартетном звукоряде биладовых монотоникальных систем объединять в единой целостной полиладово-политональной организации.

Мелодии, написанные на основе ионийского тетра хорда (сопрано), Комитасом трактуются в ладотональности нижней пятой ступени гипоионийско-миксолидийского лада. В той же ладотональности излагается партия теноров. Альты централизуются в верхнемедиантовом гипофригийско-локрийском ладе. Только партия басов развёртывается вокруг первой ступени гипоионийско-миксолидийского лада. Таким образом, заключительное мажорное тоническое трезвучие представляется с удвоенным квинтовым тоном в мелодическом положении последнего.

В хоре "Капут курак эцел ем" партия сопрано излагается в ионийской сфере нижней пятой ступени (**си бемоль**) основной гипоионийской ладотональности (**ми бемоль**). На эту же ступень опираются тенора. Альты развёртываются в верхнемедиантовом гипофригийско-локрийском **соль**, а басы - в основном гипоионийско-миксолидийском **ми бемоль**.

Указанные три биладо тональности также охватываются в трёхтональной целостной системе, в которой многоголосие, опираясь на основной гипоионийско-миксолидийский лад, органически вбирает в себя также ладотональности нижнедоминантовой и верхнемедиантовой сфер.

Помимо рассмотренных ладов диатонического квартетного звукоряда, в хорах Комитаса встречаются также лады с двойственным тетра хордом. Это наименование, предложенное Х.С.Кушнаревым, более всего оправдано в творчестве этого ав-

тора. Как известно, в данном тетраорде значение тоники могут приобретать как первая, так и её четвёртая ступень, в зависимости от того, которая из них больше обыгрывается и утверждается.

В хорах Комитаса обе указанные ступени двойственного тетраорда в равной мере приобретают тоническую функцию. При тоникализации первой ступени двойственный тетраорд рассматривается в верхнедоминантовой сфере гипероктавного ионийского лада с низкой шестой ступенью (в диапазоне октавы совпадает с звукорядом гармонического минора). На основе единого звукоряда указанного лада развёртываются и остальные голоса: басы опираются на первую ступень основной ладотональности, тенора и сопрано - в верхнедоминантовом фригийском мажоре, а альты - в верхнемедиантовом фригийском ладе с низкой четвёртой ступенью (см. хор "Эсор урбат э").

Рассмотренное четырёхголосие опирается на ладотональности составных тонов тонического мажорного трезвучия гипероктавного гипоийско-миксолидийского лада, взятого в мелодическом положении квинтового тона с удвоением последнего (см. также хор "Лору гутанерг").

На основе рассмотренной системы, мелодии, написанные в фригийском ладе с низкой четвёртой ступенью (сопрано), трактуются в верхнемедиантовой сфере находящегося большей терцией ниже ионийского лада с низкой шестой ступенью, а остальные голоса многоголосия развёртываются на основе мажорного тонического трезвучия последнего в ладотональностях его составных тонов: басы и альты опираются на основной тон ионийского лада с низкой шестой ступенью, тенора - в фригийском мажоре верхнедоминантовой сферы.

Если тоникой становится четвёртая ступень двойственного тетраорда, то она трактуется как тоника гипогармонического минора, в котором двойственный тетраорд расположен ниже тоники. Многоголосие организуется на основе указанного лада, в котором за тонический центр принимается унисон, октава и квинтоктакорд, построенные на первой ступени. В последнем случае сопрано, басы и один из средних голосов излагаются в основной ладотональности, а второй средней голос - в нижнедоминантовом фригийском мажоре (см. хор "Им чинар ярин").

В тройственном ладе, в основе которого лежат два сцепленных двойственных тетраорда, тоникой чаще является общий соединяющий тон обоих тетраордов (четвёртая ступень

нижнего). И здесь лад является гипероктавным: за пределами двух двойственных тетракордов развёртывается по диатоническому квартовому звукоряду.

Как во всех ладах, так и в этом случае, вокруг тонического тонального центра с позиций традиционной теории возникает биладовая система: гиполад дважды гармонического мажора сочетается с фригийским мажором. На нижней пятой ступени возникает гипомиксолидийский лад с низкой второй ступенью. Если мелодия вращается в сопрано в сфере нижней доминанты указанной гипосистемы, то тенора развёртываются в гиполаде основного дважды гармонического мажора (см. хор "Бахи пат ддум а"), а басы - в основном дважды гармоническом мажоре.

В рассмотренной нами многоголосной трижды биладовой тритональной системе возникают ясные гармонические обороты, в которых созвучия представлены в виде трезвучий, септаккордов и их обращений, квинтоктаккордов.

Как известно, в ладах диатонического квартового звукоряда аккордика терцовой структуры октавами вверх и вниз не повторяется. С позиций октавной системы возникают варианты созвучий одной и той же ступени, которые при общности гармонической функции создают различный фонический, колористический эффект.

Так в гиподорийско-эолийском ладе отметим нижнюю мажорную субдоминанту и верхнюю - минорную, малый мажорный нижний седьмой септаккорд, разрешающийся помимо тоники также в верхнюю третью ступень (как побочная доминанта к третьей ступени) и верхний малый минорный седьмой септаккорд, нижний малый минорный и верхний полууменьшенный пятый септаккорды и т.д.

Следует особо подчеркнуть, что малый мажорный доминантсептаккорд европейской мажоро-минорной системы является одним из характерных аккордов в ладах квартового звукоряда. Так, нижний пятый септаккорд гипоионийско-миксолидийского лада - малый мажорный, однако наряду с ним имеется и малый минорный верхний пятый септаккорд. Широкое применение доминантсептаккорда и его обращений в ладах армянской музыки следует поэтому не как привнесённое извне, а как результат познания и практического претворения внутренних выразительных возможностей монодических ладов.

В одном из вариантов обработки песни "Хнки цар" (г) для женского хора, основная мелодия развёртывается у первых со-

прано в диапазоне пентахорда в ионийском до, а вместе с партией вторых сопрано составляет гипоионийский лад. Партия третьих сопрано излагается в нижнедоминантовом гипоионийском ладе соль, вводный тон которого фа диез является высокой четвёртой ступенью основной ладотональности. Первые альты опираются на верхнемедиантовый гипофригийско-локрийский лад, а вторые альты - на центральный гипоионийско-миксолидийский. Из этой полиладово-политональной фактуры в первом предложении рождается очень ясная гармоническая последовательность: I - NVII₃₄ - I₆ - BIV - I₄₆ - NV. Во втором предложении достоин внимания III₇, который с позиций мажоро-минорной системы является двойной доминантой. У Комитаса указанный аккорд образовался в результате вовлечения в многоголосную фактуру нижнедоминантовой гипоионийской сферы. Здесь рассмотренная субдоминанта переходит в NVI, а далее в V₆ - V₄₆ и завершается тоникой. Указанная последовательность аккордов является результатом логически осмысленного мелодического движения различных голосов.

Во фригийском мажоре, дважды двойственном (тройственном) ладе мажорное трезвучие второй ступени, расположенное полутоном выше тоники, с точки зрения мажоро-минора является неаполитанской субдоминантой, а нижние V₇ и VII₇ дважды двойственного лада - альтерированными (соответственно, с пониженными квинтовым и терцовым тонами), NVII, NVII₇, NV, NV₇ фригийского мажора в европейской мажоро-минорной системе отсутствуют. Эти аккорды и их обращения находят место в творчестве Комитаса как результат полифонического полиладово-политонального изложения многоголосия. Плавное мелодическое голосоведение способствовало образованию различных проходящих и вспомогательных созвучий.

Исходя из концепции предложенного метода анализа, можно представить балет "Антуни" графически, где на единой плоскости помещены разные параметры исследования. Художественное произведение (балет) в данном типе анализа представляется в виде единой объёмной многомерной точки, в которой свёрнуты понятия времени и пространства, обладающие свойствами художественной информации, материальной конструкции и энергии движения. "Любой объект во Вселенной можно считать процессом, в то же время любой процесс является также объектом. В каждом процессе и объекте идут колебательные движения от информационного единства к физической дифференциации. Физическая дифференциация должна строго соответствовать духовному единству. Условием развития этих двух противоположностей является наличие третьего элемента, обеспечивающее непроявленное присутствие одной противоположности в другой. Эту роль выполняет энергия, являющаяся посредником, определяющим развитие Вселенной. Информация, энергия и вещество составляют единое целое"¹.

На графике 3 изображена модель драматургии балета как целостной многоуровневой системы. Модель выявляет конструктивные композиционные особенности, которые лежат в основе этого произведения. Э.Оганесян мыслит полифонически, и этот принцип распространяется на все параметры развития в балете: преобразование тематического материала, формообразование, характер движения, темпов, оркестровки и т.д. Два акта балета, каждый из которых состоит из пяти картин, бинарно противоположны и расположены визуально слева направо, вверх и вниз, поскольку в данной графически-конструктивной модели системы они сообщаются друг с другом через горизонтальный временной вектор. Для анализа балета мною выделены и компактно расположены в едином конструктивно-информационном поле пять параметров, коррелирующих драматургический процесс художественного целого.

Во внешнем слое графика 3 представлены названия картин балета, в которых закодирована программа содержания в каждой картине.

I параметр определяет уровень смысловой нагрузки в каждой картине обоих актов: в I - 1. Творчество, 2. Труд, 3. Творчество, 4. Любовь, 5. Единение с народом; во II - 1. На-


¹ С.Лазарев. Чистая карма. Книга вторая. Санкт-Петербург, 1998, с.33.

силie, 2. Страдание, 3. Призыв к борьбе, 4. Борьба, 5. Единение с народом.

II параметр определяет образную систему каждой картины балета: в I акте - 1. Антуни один. 2. Антуни, Хумар, парни, девушки. 3. Антуни, Хумар-Муза. 4. Антуни, Хумар. 5. Антуни и Хумар на фоне народного праздника; во II акте балета присутствуют Народ, Антуни, Хумар во всех пяти картинах.

III параметр определяет характер движения, выраженный в данной системе через темповые обозначения картин:

Схема



концентрическая форма

IV параметр связан с типом формообразования в каждой картине обоих актов балета: в I - 1. Сл. 3-х частная с элементами сонатности. 2. Сл.3-х ч. на двойных вариациях. 3. Пассакалия. 4. Симфонические вариации. Во II - 1.Двойные вариации. 2. Пассакалия. 3. Симфонические вариации. 4. Пассакалия. 5. Пассакалия.

V параметр определяется через тематизм, включённый в систему развития каждой картины, анализ которого изложен выше.

Через систему данной аналитической модели можно выделить некоторые особенности драматургии целого:

1. Форма балета концентрическая.
2. Два акта балета являются зеркальным отражением друг друга.
3. Симметрия проявляется на разных уровнях.

В этой красивой, рационально скомпонованной, симметрично отражённой композиции балета, первые и вторые картины обоих актов составляют экспозиционный раздел, третьи картины - разработку и кульминацию, а четвёртые и пятые картины обоих актов объединяются в репризу. Таким образом,

на макроуровне выстраивается симметрично-отражённая форма сонатного allegro.

Некоторые аспекты аналитической интерпретации драматургии и конструктивных принципов балета "Антуни" позволяют сделать вывод, что драматургически цельная, строго выверенная структура балетной музыки стала залогом огромного успеха, выпавшего на долю этого произведения. Необходимо отметить мастерское сценическое воплощение этого грандиозного замысла балетмейстером-постановщиком М.Мартirosяном, прекрасные декорации М.Аветисяна, выразительные костюмы Р.Элибеяна.

Особенно впечатляюще звучат слова Арама Хачатуряна о балете своего ученика и последователя: "Я переполнен чувством гордости за нашу армянскую музыку. Балет Э.Оганесяна - яркое тому свидетельство. "Антуни" - великолепное произведение. Всё выглядит очень свежо, очень талантливо. Музыка Э.Оганесяна выразительна и необыкновенно изобретательна"¹. Высокая оценка балета "Антуни", данная Арамом Ильичом, который сам является основоположником современной балетной драматургии в армянском искусстве, определила место, которое по праву занимает это произведение, вошедшее в золотой фонд балетного музыкального творчества.

¹ Г.Тигранов. Балеты Эдгара Оганесяна. Ереван, "Советакан грох", 1981, с.33.

ՁԱՐԱ ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ

**ԱՐԵՎԵԼՔԻ - ԱՐԵՎՍՈՒՏՔԻ
ԽԱՇՈՒԴԻՆԵՐՈՒՄ**

«Աշխարհագրությունը՝ ճակատագիր է»: Հավերժ հայտնի ճշմարտություն, որը յուրաքանչյուր ժողովրդի պատմական ուղու իրագործման կարևորագույն գործոններից է: Այն ուղղակի և անուղղակի առումով ձուլում է նրան որպես ազգային միավոր, կերտում նրա արտաքին և ներքին կերպարը, ձևավորում նրա գաղափարագեղարվեստական աշխարհընկալման եզրերը:

«Երկդիմի Յանուս», - այսպես է բնորոշել Վ.Բրյուսովը հայ ազգային գեղարվեստական ուրվագիծը: Իրապես, այս առավել քան ճշգրիտ և դիպուկ որակումն աշխարհագրությամբ պայմանավորված պատմական անընդմեջ Արևելք - Արևմուտք դեգերումների հետևանքով ստացված հայ գեղարվեստական մտածողության և հոգեբանության եզակի իր որակի մեջ բազմաշերտ ռեալությունն է: Այդ զանգվածի մեջ առանձնակի՝ ակնհայտորեն առկա են թե՛ Արևելյանի, թե՛ Արևմտյանի բաղկացուցիչները, սակայն ոչ ընդունված ավանդականի ձևով (ինչպես դա ասենք օրինատալիզմն է), այլ նոր մի բուրրովին որակական արժեքի տեսքով, որպես երկուսի օրգանական ներդաշնակություն: Սա արդեն լայն կտրվածքով ոչ Արևելք է և ոչ Արևմուտք, այլ իսկապես երկդիմի (դրական առումով) մի երևույթ, որը, զոնե, մեզ հայտնի սահմաններում որակական նախադեպ կամ զուգահեռ չունի: Հայ գեղարվեստական մտածողության յուրօրինակ ինքնատիպը Կիպլինգի հանրահայտ անհաշտության թեզիսի բացահայտ հերքումն է: Իր որակի մեջ այս երրորդ մակարդակի արժեքն երկարատև պատմական զարգացման ընթացքի արգասիք է, որն ընթացել է մշտապես, առանց ընդհատումների, նաև որոշակի սկզբունքային-փուլային ալիքներով: Յուրաքանչյուր ալիք իր հետ բերել է նոր պատմական դիրքի նվաճում և տարերայնության թվացյալ պատկերի մեջ հետևել տրամաբանական նպատակամետ և որոշակի ճանապարհի: Ասել կուզի, հետևողականորեն կերտվել է ազգային գեղարվեստական մտածողություն՝ իր ակոսը բացելով Արևելք - Արևմուտք խաչուղիներում:

Ազգայինի հատկանիշը յուրաքանչյուր մշակութային համակարգի ամենանշանակալից, կայուն և տիպական դրսևորումն է: Այս դարձյալ հայտնի ճշմարտությունը, սակայն, իր ամբողջական էության մեջ հառնում է բազմապիսի շերտերի ձևով թե՛ լայնակի՝ պատմական ետնկարի մեջ և հեռանկարի առումով, և թե՛ երկակի՝ տեղային տեխնոլոգիական

կոմպլեքսի առումով, կտրվածքներում: Բացահայտել ազգայինի էությունը՝ կնշանակի ամբողջականության մեջ բացահայտել տվյալ մշակութային համակարգի բովանդակությունը, ընդամին նախանշել նրա պատմական և գեղարվեստական արժեքը համաշխարհային մշակույթի շարքում:

Որքան իրենց ամբողջականության մեջ ամեն մի ժամանակի համար ընդհանրական են արտահայտչամիջոցները, որոնք և, ի դեպ, ստեղծում են «գելարվեստական ժամանակ» հասկացությունը և դառնում է պոխալ արվեստի մեջ, այնքան ինքնություն և ինքնատիպ է յուրաքանչյուր ազգային մշակույթի համար այդ արտահայտչամիջոցների ընտրությունն և դրանց տարբեր կոմբինացիաներն ընդհանուր մտածողական կոմպլեքսի մեջ: Այդ կոմբինացիաներն առաջին հայացքից ստեղծում են պատահականության պատրանք, և սակայն հենց դրանում մշտապես ցուցաբերում որոշակի միտում: Վերջինս և մեծապես պայմանավորում է, այսպես կոչված, ազգային գեղարվեստական մտածողության որակը, նրա բովանդակությունը: Աշխարհընկալման տեսանկյունը, տեսադաշտի մասշտաբները, հեռանկարի ընդգրկման սահմանները և իբրև դրանից ելնող՝ արտահայտչամիջոցների կոմբինացիոն դրսևորումները ներկայացնում են իրենցից ի վերջո մի քանի կայուն և որոշակի գեղարվեստական բանաձևեր: Այս բանաձևերի մեջ պարփակված՝ պատմականորեն լայն և նեղ առումով, բովանդակային էության հանրագումարը և հիմք է դառնում ազգային մշակութային համակարգ գաղափարի մարմնավորման համար: Այդ բանաձևն ընդունում ենք որպես անկյունաքարային երևույթ և նրա առաջնային կարծրության և ներդաշնակության մեջ ենք տեսնում ազգային գեղարվեստական մտածողության պատմական երկարատև ժամանակահատվածի մեջ կենսագործելու պոտենցիալը, հմարավորությունները, ինչպես և բազմերանգելու միջոցները:

Հայ գեղարվեստական մտածողության բնորոշման, նրա հատկանշական էության արժեքավորման ընթացքը բարդեցված է պատմական կտրվածքում նրա խիստ երկարատև պրոցեսով: Իսկապես, եթե հայ մշակութային համակարգը համադրվում է իր սկզբնուղու ժամանակակիցների հետ, ապա արդի փուլում նրա կողքին չկա և ոչ մի մշակույթ, որի հետ նա սկսել է իր պատմական գեղարվեստական ընթացքը: Պատմական փաստ է, որ ամեն մի ժողովուրդ - ազգային միավոր (իր անհատ կրողների հետ միաժամանակ) պատմական ասպարեզի վրա ունենում է որոշակի կենսական ժամանակ: Վերջինիս ընթացքում նա ձևավորվում է իբրև գեղարվեստական-մտածողական երևույթ, հասնում որոշակի զագաթի, անկում ապրում և ապա այլևայլ ձևերով հեռանում պատմական ասպարեզից: Այս առումով կարելի է տեսնել մշակութային միգրացիաների մի բազմապես և հախտուն, միևնույն ժամանակ և տրամաբանական

պրոցես, որն մարդկության քաղաքակրթության կոմպլեքսի մեջ աշխարհագրականորեն տարածվում է Արևելքից դեպի Արևմուտք՝ այդ պրոցեսի զարթոնքից մինչ այսօր: Այդ հեռանկարի մեջ հայ արվեստն ունի ուրույն դեր, իր, ընդհանուրի մեջ՝ արժեքի ձևով: Սկզբնավորվելով մարդկության քաղաքակրթության վաղնջական ժամանակներից, հայ մշակույթը արդի պայմաններում դեռ ունակ է ստեղծել ընդհանուր քաղաքակրթական համակարգի մեջ համարժեք երևույթներ, ընդ որում պահպանելով ոչ միայն արտաքին անվանական կողմը (հայ արվեստ, ինչպես ասենք այսօր կա՝ հունական արվեստ, եգիպտական արվեստ, ավանդաբար և ոչ մի գեղարվեստական մտածողական կապեր չունեցող նույնանուն հնադարյան երևույթների հետ), այլև իր բովանդակային գեղարվեստական մտածողական արժեքը:

Հայ մշակույթի և գեղարվեստական մտածողության առնչությամբ մշտնապես ընդգծվում է ժողովրդի աշխարհագրությամբ պայմանավորված խիստ կոմունիկատիվ բնությունը, որը վերջինիս աննախադեպ կենսակայունության արժեքավորման կարևոր գրավականներից է: Մշտապես անխոչընդոտ յուրացվող օտարամուտ ազդեցությունները միայն ամրապնդել են ներքին բանաձևի առկայությունը: Դրանք հարստացրել են արտաքին ատրիբուտիկան, բայց անձեռնմխելի են թողել ատաղձը: Մի կողմից թույլ են տվել և, անգամ, խթանել են նպաստավոր նորամուծությունները, մյուսից՝ ընդդիմադրել սեփականի անընդհատ ինքնահաստատումամբ: Սա ստեղծել է որոշակի առածգական և ժամանակի մեջ ճկուն, մանևրների հակված երևույթ, որն և շնորհիվ այս ճկունության պատմական հեղաշրջիչ հատվածների կարողացել է դիմադրել և կարծր կոմպլեքսների մեծ չկտրվել: Առածգականությունը շնորհել է հայ գեղարվեստական մտածողությանը որոշակի պատմական շնչառության ռիթմ՝ իր տեղատվությունների և մակընթացությունների տրամաբանությամբ: Թերևս, դրանում կարելի է տեսնել կենսակայունության հնարավոր հատկանիշներից մեկը, որն արդի գեղարվեստական-մտածողական ավանդույթների բազմագործոն գոյատևման պայմաններից է: Հետաքրքիր է նշել, որ այդ շնչառության ռիթմը չի համապատասխանում հաճախ քաղաքական-սոցիալական զարգացման ալիքներին, իսկ երբեմն հակադարձ համեմատական է դրանց ընթացքին: Այս առումով պատմականորեն, երբեմն և մշակութային մտածողական համակարգից դուրս են մնում ընդհանուր քաղաքակրթական առանձին նվաճումներ՝ մի կողմից նպաստելով ազգայինի մեջ որոշակի ժանրային դրսևորումների հիպերտրոֆիկ վերելքին, ի հաշիվ մյուսների ուշացած մուտքի: Այդպիսին է, ասենք, մեր գրական մտածողության մեջ պոետիկ մտածողության և արձակի համադրությունը:

Բնականորեն, անկարելի է 2000 տարին տեսնել անդադար վերելք-

ների շղթայի ձևով, և դա անհնարին է ոչ միայն հայ, այլև շատ ավելի երիտասարդ պատմական ուղի ունեցող գեղարվեստական-մտածողական համակարգերի համար: Գագաթները տեղի են տալիս տեխնոլոգիական-պատմական կուտակումների ժամանակահատվածների, ընդ որում վերջիններս երկարատև են ավելի և դանդաղընթաց:

Խոշորագույն գագաթը, որն մեծապես պայմանավորվում է գեղարվեստական-մտածողական բանաձևի կենսակայուն որակի և նրա ամրությունը պատմական առումով՝ հայ այբուբենի լուսավոր դարն է: Այն ի մի է բերում ազգային մտածողության մի շարք բաղադրիչներ, միևնույն ժամանակ իր մեջ առնելով արդեն ի հայտ եկած մտածողական տարրեր, որոնք երջանիկ արտացոլվեցին գրաֆիկական պլաստիկայի մեջ և ներդաշնակեցին գեղարվեստական մտածողությանը - այն է՝ պարզություն, ֆունտիկայի բազմազանության մեջ հստակ գրաֆիկական դաճվածք: Թվացյալ երկրորդական նշանակության երևույթները դառնում են դիմորոշ, քանզի իրենց սեփական տառանշանակում չունեցող ազգային մշակույթների զարգացման ուղին իր տիպիկ դժվարություններով հաստատում է այս միտքը: Այսպիսով, իր որակում ներդաշնակ գեղարվեստական-մտածողական և արտահայտչական միջոցների առկայությունը վաղ քաղաքակրթական ժամանակներում դառնում է մեկ այլ կարևորագույն բաղադրյալ գեղարվեստական-մտածողական համակարգի կայունության համար:

Երկրորդ գագաթնային նվաճումը՝ հայ Ռեներսանսի ժամանակաշրջանն է, երբ շեշտակի ընդլայնվում են աշխարհայացքը, ընկալման հորիզոնները, մասշտաբներն, սակայն որոշ առումով արվեստի մասնավոր ձևեր մնում են գերծ ընդհանուր ժանրային նվաճումներից: Յուրօրինակ առումով վերջինս ևս հայ մշակույթի գեոպոլիտիկայի արգասիքն էր և դրա հետևանքով սոցիալ-քաղաքական իրադրության արդյունք:

Երրորդ գագաթն իր զարգացման մեջ ամենաերկայնաձիգն է՝ մոտ 300 տարի՝ որոշակի ալիքներով: Սկսվում է աշխարհագրական պարփակվածության հաղթահարման պրոցեսի նախ Անդրկովկասյան, ապա Արևելյան, և ավելի ուշ՝ եվրոպական հորիզոնների ձևով: Պատմականորեն, ժամանակի մեջ խախտումով, յուրացվում են նոր մտածողական-գրական ժանրեր (վեպ, պատմվածք, վիպակ՝ արձակ): Ներթափանցում է գեղարվեստական համակարգի մեջ ռոմանտիկականն և այս երևույթը դառնում է ճակատագրական հայ արվեստի զարգացման համար, քանզի երկար տարիների ընթացքը համաշխարհային քաղաքակրթության հետ՝ սինխրոնացվում է: Փաստորեն, մինչև 19-րդ դարը հայ մշակութային համակարգը, որոշ առումով, ապրում է իր անտոնոմ կյանքով, չնայած իր մեջ երբեք չդադարող կոմունիկատիվ բնույթի: Եվ այս գեղարվեստական իզոլյատի գոյությունը գուցե և այն պայմաններից մեկն է եղել, որը

խոչընդոտել է հայ գեղարվեստական-մտածողական ընդհանուրի՝ մեջ մինչև վերջ պարպման և այսպիսով նրա քաղաքակրթական միսիայի կատարման և եզրափակման համար: Եվրոպականի հետ համաքայլ հայ մշակութային գեղարվեստական-մտածողական համակարգի ընթացքը պիտի թվագրել ընդամենը 200 տարով, այսպիսով արժեքավորելով հայ արվեստն իբրև բովանդակությամբ 2000 տարվա, իսկ տարիքով՝ 10 ամգամ երիտասարդ երևույթ:

Գրական մտածողության ընդերքում սկսում են ձևավորվել դարերի ընթացքում հղկված գաղափարական բանաձևեր՝ ստանալով դարեվերջին քաղաքական պատկերավորում և ներթափանցելով մտածողության բացարձակապես բոլոր ոլորտները: Առանձնացնենք դրանցից մի փունջ, որոնք եղել են, գոյատևել, իսկ իբրև քաղաքական, գեղարվեստական-մտածողական արժեք գիտակցվել 19-20 դդ. սահմանագլխին՝

- լավատեսություն,
- լուսերգություն,
- լույսի կերպար,
- լույսի ձոնում և գովերգում

(սկսած Մաշտոցի դաճված առաջին բառերից մինչև այսօր) և սրա հետ մշտապես ուղեկցող

հույս և հավատ,

քանզի դրանք առաջինի արգասիքն են և պայմանավորում են մեկն մյուսին: Քրիստոնեական գեղարվեստական մտածողության տիպիկ դրսևորում՝ նյութականի նկատմամբ հոգևորի վառ արտահայտված պրիմատով: Այս հանգամանքն և պայմանավորում է վաղ (ավելի քան Եվրոպայում) Ռենեսանսային մտածողության ծագումը՝ համահնչուն և ներդաշնակ արձագանքելով ազգային-գեղարվեստական կոմպլեքսին և ժամանակի պահանջներին:

Քրիստոնեական ետերգության կարգին հայ գեղարվեստական միտքը երբևէ չի կորցնում իր խռովահույզ և տագնապալից ոգին (հիշենք Ֆրիկին, Մխթամարցուն), ինչպես նաև կարծես իրարամերժ՝ գեղոնիզմի հեթանոսական հեռուներից եկող կենսահաստատ ուժը: Գեղարվեստական աշխարհընկալման երեք հեռուների վրա խարսխված այս հենքը ստեղծող բևեռները պատմական այլևայլ պայմաններում բազմապիսի կոմքինացիոն համալիրների մեջ հայ մշակույթի համար մշտապես ապահովում են հավատ (բայց երբեք ոչ ֆանատիզմ), օպտիմիզմ և գեղոնիզմ, բայց ոչ թեթև կտրվածքով, քանզի հարստացած են առաջինի առաքինի ուժով: Սրանք և ապահովում են ավանդույթի հարատևում՝ հանդարտ, անշեջ, անընդմեջ ուժով, բայց և ամուր հիմքի հետևանքով խթանում քվանտային զարգացումը: Երաժշտական-գեղարվեստական պրոֆեսիոնալ մտածողության զանգվածի ձևավորման ընթացքում ակնհայ-

տորեն առանձնանում են երեք նշանակալից զագաթ՝ Տ.Չուխաջյան, Կոմիտաս և Ա.Խաչատրյան: Իր դիմամիկայի մեջ հայ երաժշտական պրոֆեսիոնալ արվեստը մի քանի անգամ բախվել է Արևելք - Արևմուտք ընտրության խնդրին և յուրաքանչյուր անգամ յուրովի լուծում գտել այս առեղծվածի համար՝ համաձայն պատմական կոնկրետ ժամանակահատվածի իրավիճակի և նախադրյալների: Բացահայտելու նպատակով հայ ազգային գեղարվեստական մտածողության երևույթը հետաքրքիր է դիտարկել նրա մի քանի պատմական ընթացքի մեջ սկզբունքային նշանակություն ունեցող զագաթներ, որտեղ ուժեղ անհատների գեղարվեստական աշխարհի և աշխարհընկալման մեջ կիզակետվում է գեղարվեստական մտածողական ազգային տարրը՝ հետագա պատմական ընթացքը ապահովելով և զարգացման գրավական դառնալով: Յուրաքանչյուր անգամ մի նոր ձևով և ամեն անգամ մի նոր եզր նվաճելով, հարստացնելով ընդհանուրն իր նոր ընդգրկումներով, ամեն անգամ ընդլայնելով հորիզոնները, բայց միշտ մնալով ազգային ինվարիանտին հարազատ:

* * *

Առաջնանցի ուղին արվեստում միշտ դժվարին է և հախուռն, բազմակողմանի և բազմանշող:

Տիգրան Չուխաջյանի ստեղծագործական սխրանքը այդպիսի տիպական մի ճանապարհ է՝ մաքառումների և նվաճումների դիմամիկ սլացք, որոնք արահետներ են հարթել հայ պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման համար տարբեր ասպարեզներում: Օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք նախապայմաններ, սակայն, կանխորոշել են այդ ուղիների հետագա ճակատագրերը, արդյունքում անբերրի թողնելով դրանք: Չուխաջյան-արվեստագետն իր ողջ էությանը թե՛ պատմականորեն, թե՛ աշխարհագրականորեն ժամանակների և ճանապարհների խաչուղիների կիզակետում է: Մրանով էին մեծապես պայմանավորված և բացատրվում նրա թե՛ ստեղծագործական միտումները, և թե՛ արվեստի զարգացման ուղղվածությունը և բնույթը, թե՛ հետագա ընթացքը:

Չուխաջյանի պատմական կոնկրետ ժամանակահատվածի մեջ իրագործված Արևելք - Արևմուտք սինթեզը կատարյալ էր իր որակի մեջ և ներդաշնակորեն ներhyուսվում է համաշխարհային ընդհանուր երաժշտական զանգվածին իբրև օրինաչափ և պատճառաբանված, առաջնեկի իրավունքով՝ մշակութային երևույթ: Եվրոպական գեղարվեստական ժամանակում դա պերիֆերիկ ղեմնկրատական երաժշտական դպրոցների ձևավորման բուռն շրջանն էր և հայ պրոֆեսիոնալ դասական դպրոցն օրգանապես ձուլվում է այս առումով ընդհանուր պատմական պրոցեսի մեջ: Յուրաքանչյուր ազգային դպրոց այդ պարագայում մշտապես հան-

գում էր ազգայինի և համաեվրոպականի սինթեզի խնդրին՝ համարժեքի ստեղծման միտումով, համապատասխան ազգային մշակույթի պատմական և պոտենցիալ զարգացման հնարավորությունների՝ յուրաքանչյուր անգամ սինթեզին ինքնատիպ լուծում տալով: Եվրոպական ժամանակի առումով խորհրդանշական է Չուխաջյանի ստեղծագործական նախասիրությունը երաժշտական թատրոնի՝ լայն ժանրային ընդգրկումներով, նկատմամբ: Եվրոպական երաժշտական մշակույթի մեջ, հարուստ և տարբեր պատմական շերտավորումների այս ժամանակաշրջանը նշանավորվում է երաժշտական թատրոնի ասպարեզում տարբեր գեղագիտական ուղղությունների համատեղ գոյատևմամբ: Հետաքրքիր է, որ դպրոցի առաջնեկի իրավունքով, Չուխաջյանի ստեղծագործության մեջ արտացոլում են գտնում համարյա բոլոր ժանրային տարատեսակները՝ իրենց իտալական և ֆրանսիական տիպային ձևերով: Սա վկայում է նաև Չուխաջյանի՝ ժամանակի զարկերակը նրբորեն լսելու ունակությունը, ոչ միայն լայն, այլև իր լուկալ հատվածների մեջ: Դրանում է, թերևս, նաև հայկական օպերետի ստեղծման առեղծվածը: Չուխաջյանի ստեղծագործական միտումներն ի սկզբանե ուղղվում են Արևելյանի և Եվրոպականի մերձեցման եզրերի որոնումների ուղղությամբ: Չուխաջյանի երաժշտական մթնոլորտն ազգային բովանդակությամբ մշտապես եղել է բազմաշերտ, միևնույն ժամանակ հանդես գալով թե՛ ինքնություն ազգային արժեքների և թե՛ ինքնատիպ ձուլվածքի ձևով: Պատմական-պոտենցիալ արևելյան մտածողությանն հավելվում է պրոֆեսիոնալ երաժշտական կրթությամբ բերված արևմտյան շերտը՝ ստեղծելով ներդաշնակ մտածողական կառուցվածք՝ այս փոխազդեցության պատմական առումով իր որակում կատարյալ մակարդակով: Չուխաջյանի մտածողության մեջ սա հանգեցնում է Արևելքի բացահայտման մեկ այլ եզրի՝ կապված, մասնավորապես, երաժշտական թատրոնի ժանրում խոր և օրինաչափ ավանդույթներ ստեղծված օրինատալիզմի առնչման հետ: Միևնույն ժամանակ օրինատալի և ազգայինի դասակարգման շրջանակները ուրվագծվում են՝ հիմնականում թեմատիկ փոխներգործման եղանակով: Արևելյան շերտը Չուխաջյանի երաժշտական մտածողության մեջ եռակի բեկում է ապրում.

ա) իբրև պատմական-պոտենցիալ ինֆորմացիոն հենք,

բ) իբրև արևմտաեվրոպական օրինատալիզմի արտացոլում,

գ) իբրև հայ ազգային երաժշտական ավանդույթների դրսևորում արևմտահայ քաղաքային բանահյուսության ձևով:

Այս եռարժեք մտածողական կոմպլեքսն առաջնորդում է Չուխաջյանին ժամանակի դժվարին ուղիներում՝ թույլ տալով կողմնորոշվել ազգայինի և եվրոպականի ձուլվածքի մեջ: Ազգային ասելով՝ Չուխաջյանի նկատմամբ նկատի ունենք երևույթի գաղափարական կողմը, քանզի ձևի

և արտահայտչամիջոցների առումով այն դեռ պատմականորեն չէր հասունացած: Չուխաջյանը հաստատում է հայ պրոֆեսիոնալ երաժշտության համար կարևոր և կենսունակ մի տենդենց ևս. արժեքավորող, նաև ընտրողական վերաբերմունք ազգային արժեքների իմաստավորման և յուրացման նկատմամբ, որը ստանում է հայ երաժշտական արվեստի զարգացման շրջադարձային փուլերում էական խթանիչ գործոնի արժեք՝ գեղարվեստական-մտածողական նոր մակարդակների նվաճման ձգտումով: Այն դառնում է նաև ազգայինի առավել խոր շերտերի ներթափանցման բանալի՝ նպաստելով տարբեր հարթությունների վրա պերմանենտ սինթեզին, հետևաբար և ազգային զարգացման ընդհանուր պրոցեսին երկու չափանիշներով՝ խորությամբ և ընդգրկումների ընդլայնմամբ: Հայ պրոֆեսիոնալ արվեստի ողջ ընթացքը սրա հաստատումն է:

Տիգրան Չուխաջյանի բազմագործոն ձևավորման պրոցեսը, իբրև ստեղծագործ անհատականություն, թե՛ իր ժամանակին և թե՛ ավելի ուշ, արդեն մեր օրերում, հաճախ տարակուսող ձայներ է արթնացրել: Դրանց թվում լավել է և Հակոբ Պարոնյանի ձայնը: Պատմական կարճատև հեռանկարի մեջ Չուխաջյանի ընտրած ուղին ազգային նկատմամբ կոմպրոմիսային արժեք է ընկալել: Սակայն նրա արգասավոր բովանդակությունը պատմականորեն արդարացի նվաճում է դարձել ոչ միայն հայ մշակույթի գեղարվեստական մտածողական համակարգի ձևավորման համար:

* * *

Յուրաքանչյուր փորձ դիմել Կոմիտասին՝ անհատականությանը, ստեղծագործությանը, գործին, երևույթին, ազգային սխրանքին, վեր է հանում կարծես արդեն լուծված խնդիրների նոր առեղծվածներ համապատասխան պատմական ժամանակի պայմաններին և գեղագիտական ընկալումների սահմաններին:

Այն տարածվում է և փոփոխվում անընդհատ ժամանակի մեջ, պատմական է իր էությանը և դրա որևէ կադապարի մեջ կարծրացումը կնշանակի ազգի պատմական ընթացքի վերջնակետ, այլ կերպ՝ ազգային երևույթի վախճան: Հետևաբար, կենսատևող ազգայինի մեջ, յուրաքանչյուր ժամանակ իր մեջ բերում է իր բովանդակությունը հաստատում ինվարիանտի մեջ՝ բայց անընդհատ փոփոխական ատրիբուտներում: Մրա հետևանքներով և, առաջինը թույլ է տալիս այլևայլ ձևերում անվերապահորեն ճանաչել և առանձնացնել կոնկրետ ազգային, իսկ երկրորդը՝ մշտապես նրա բովանդակային էությունը նորոգել՝ ժամանակին համաքայլ: Այլապես ազգային երևույթի մեջ չկա և չի կարող լինել առաջընթաց, իսկ ազգը՝ քանզի ոգու էությունն է նրա առաջնային հատկանի-

շն, դատապարտվում է հետզհետե տարրալուծման ոգեկանի այլ ձևերի մեջ: Եվ բնական է, որ յուրաքանչյուր ժամանակ, ամեն մի տասնամյակ, իր հետ բերում է իր Կոմիտասը, գտնում է տիեզերականի մեջ իր լարը, լսում իր ժամանակը նրանում: Հետևաբար Կոմիտաս-երևույթը լիովին բացահայտման ենթակա չէ, քանզի այն հավերժական է իր բացահայտման ձևերի մեջ, որպես հարատևող ազգային ոգու արտացոլում, իսկ դրա ավարտուն նկարագիրը կարող է կայունանալ միայն հետմահու:

Կոմիտաս և ազգ հասկացություններն ազգային գիտակցության մեջ հոմանիշ են, ունեն սիմվոլի արժեք: Այս նույնացման պատմական գործոններն ակնեղև են: Պատմական ժամանակային և գեղարվեստական գործոններն դարասկզբին այդ անհատականության ֆենոմենի ձևով և միջոցով կիզակետել են ոգու խորացումն և դրոշմվել գիտակցության մեջ իբրև նույնանուն: Անհրաժեշտությունը բևեռվում էր ժողովրդականի և հոգևորի միաձույլ ներդաշնակության մեջ: Եվ դրա պատմական զուգահեռ ապացույցն է Թումանյանի երևույթը: Գեղարվեստական միջավայրը ժամանակային բարենպաստ պայմաններում բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հաջողակ համընկման և խաչաձևման հետեվանքով ծնում է իր լիդերին, որն առաջնորդում է ընթացքը, նպաստում նրա թռիչքային, պոռթկունմային վերելքին: Սա երկստեք արգասավոր պրոցես է՝ ժայրագույն պայմանավորված մեկը մյուսով: Ընդ որում ժամանակն ինքն է ընտրում առաջատարին՝ պետական գործչին, բանաստեղծին, գրողին, երաժշտին: Այս պարագայում ձևն լոկ կրող է դառնում, քանզի առաջնային շեշտն իր վրա է վերցնում ցանկացած դրսևորումով՝ ազգային ընդհանրական ոգին: Պատմական իրականության համար ձևը չունի նշանակություն, այլ միայն նրանում պարփակված, էությանը նույնարժեք գեղարվեստական բովանդակությունը:

Կոմիտաս-երևույթի կենսամարմնավորման համար առանձնանում են երկու կարևոր գործոններ, այն է՝ ժամանակի և գեղարվեստական միջավայրի, ընդ որում երկու հասկացություններն էլ ոչ միանշանակ արժեքով, այլ բազմաբովանդակ, շերտավորված լայնակի և երկակի կտրվածքով, որն սովորաբար ընդհանրացնում ենք «հարուստ» գաղափարի մեջ: Կոմիտաս-արվեստագետը կմնար լոկ որպես լոկալ ազգային երևույթ, արժեք, եթե նրա գեղարվեստական ժամանակը չբաղդատվեր մի շարք, այն է՝

- ա) անհատի ժամանակ
- բ) եվրոպական ժամանակ
- գ) ազգային ժամանակ
- դ) պերիֆերիկ ազգային ստեղծագործական դպրոցների ժամանակ բովանդակության մեջ:

Դժվար է այս պարագայում ճշգրտորեն ասել թե որն է առաջնային

այս հյուսվածքում՝ անհատը, թե ժողովուրդը: Այսինքն ժողովուրդն է իր պատմական բնականոն զարգացման մեջ տրամաբանորեն հանգում Կոմիտասին, թե անհատը շնորհիվ իբ հսկա պատմական պոտենցիալի՝ ինքն է գտնում իր ժողովրդին անհրաժեշտ ժամանակի մեջ:

Այս երկու գործանքերը պատմականորեն ընթացել են համաքայլ և գեղարվեստական-ժամանակային պահին արգասավոր միաձուլում տվել:

Եվրոպական երաժշտական մշակույթի զարգացման հեռանկարի մեջ Կոմիտասի երևույթը բնականորեն ներհյուսվում է որպես դարասկզբի որոնումների օրգանական մի մաս: Նույնատիպ երևույթ էր և եվրոպական պերիֆերիկ ստեղծագործական դպրոցների օարթանքն ու զարգացումը, որոնց կարելի է դասել և հայ ազգային դպրոցն այս կոնտեքստում: Եթե 19-րդ դարի վերջում պերիֆերիկ դպրոցների զբաղմունքն առաջին փուլը համընկավ Չուխաջյանի երևույթի հետ, ապա երկրորդ փուլը համընկավ Կոմիտասի ասպարեզ իջնելու գեղարվեստական ժամանակին՝ ավելելով 20-րդ դարի գեղագիտական աշխարհընկալման միտումները: Եվ եթե եվրոպական դպրոցների համար մաս օրգանական, բնականոն երևույթ էր, ահա Եվրոպայի խաչուղիներից դուրս, Կովկասի սարերում կորած, բազմապիսի և դառավոր օտարամուտ ազդեցությունների ծանրության տակ կրկնված հայ մշակույթի համար սա իսկական սխրանք էր: Վերջինս կարելի է բացահայտել միայն ազգային պատմական ժամանակով՝ խտացված Կոմիտաս-անհատի հսկայական գեղարվեստական ինտուիցիայի ձևով: Մինչդեռ գեղարվեստական ինտուիցիան ևս պոտենցիալի կոնկրետ արտահայտումն է որոշակի պատմական բարենպաստ պահին: Հայ մշակույթը նույնատիպ առկայծումներ-ապացույցներ ունի իր փշոտ պատմական ճանապարհին՝ Մայթ-Նովա, Խաչատրյան:

Ժամանակը շարունակում է կերտել Կոմիտասի կերպարը, իբրև ազգային ոգու երևույթ ժամանակի պոտենցիալը և ժամանակակիցն մեկտեղելով՝ դրանով իսկ նրան կենսահարառև ոգի տալով: Ազգային ոգի հասկացության մեջ ամփոփված է Կոմիտասի գեղարվեստական աշխարհի բովանդակությունը: Այլ կերպ այս սովետության մեջ կարելի է հավասարության մշան դնել: Ակնհայտ է, որ ժամանակ հասկացությունն իր հետ բերում է և գեղարվեստական արժեքավորման և աշխարհընկալման ձևեր, կառուցված բազում բաղկացուցիչներից, որոնց մեջ, սակայն, առանձնանում են մի քանի դոմինանտներ, որպես գեղարվեստական երևույթի ինքնատիպ նկարագրի կերտողներ:

Կոմիտաս-վարդապետ: Ավանդաբար և սովորաբար մեր արվեստաբանության մեջ հայտնի պատճառներով, գեղարվեստական սանբողջության մեջ այս մոտիվը քիչ է շեշտվել կամ սահմանափակվել միայն ստեղ-

ծագործության որոշակի ոլորտով: Մինչդեռ կոմիտասյան գեղարվեստական գաղափարախոսության և բարոյախոսության հիմնաքարայինը պիտի փնտրել հենց սրանում, որն եղել է նրա աշխարհընկալման դիտակետը, ըմբռնման անկյունը, որն և դարձել է ժողովրդի ոգու բացահայտման բանալին:

Քրիստոնեության վեհ հումանիստական գաղափարախոսությունը Կոմիտասի գեղարվեստական աշխարհայացքի հիմնական դրույթներն են, որոնք արձագանքում են ժողովրդական բանահյուսության իշխող, առավել քան հազարամյա գաղափարախոսությամբ մտածողության, ոգի դարձած գեղարվեստական մտապատկերների կոնստանտների հետ:

Չլինելով երբևէ ֆանատ իր հավատքի մեջ, սակայն հայ կրոնական գաղափարա-բարոյական համալիրը, շնորհիվ իր մեջ ներառած և ինքնատիպ մտածողություն դարձած գաղափարների, բնականորեն արտացոլվել է և ժողովրդական գեղարվեստական մտածողության մեջ՝ դառնալով նրա դրսևորման ձևերից մեկը:

Անկախ ճակատագրի անողոր ուժերի երկադատև ներգործության, հայ գեղարվեստական մտածողության մեջ մշտապես հարատևել են՝

ա) լուսերգությունը

բ) հումանիզմը

գ) լավատեսությունը

դ) սերն և կարտոն իբրև վերջինս ածանցյալ ամենալայն մեկնաբանմամբ՝ աստվածայինից դեպի մարդկայինը, հողեղենը, հոգևորից դեպի զգայական-հոգևոր:

Քրիստոնեության դոմինանտները՝ խիղճ, սեր, հավատ, հույս, մաքրություն և քավություն, հավերժականություն և լավատեսություն - ժողովրդի մտածողության մեջ մարմնավորվել են գեղարվեստական պատկերացումներում: Ժողովրդական աննկուն ոգին հարատևող գաղափարների միջով և ձևով արտահայտել է հավերժականի էությունը, որոնք այսրպեականը օժտում են մշտնջենականի արժեքով և խորհրդով՝ ճառագաված քրիստոնեական գաղափարախոսության լույսով:

Այստեղից և կոմիտասյան երգերի առանձնահատուկ ոգին, ձևը, բովանդակությունը, որն և նա շեշտում է: Այստեղից և ժողովրդական ստեղծագործության ոգին Կոմիտասի մոտ: Ազգայինի նման ընթերցումը Կոմիտասի երգերը դարձնում է առանձնահատուկ մի երևույթ և դրանում է, թերևս, պատճառներից մեկը, որ այլևս և ոչ մեկին չհաջողվեց կոմիտասյան արժեքի նմուշներ հավաքել, որոնց վրա ակնհայտ է մի հուժկու անհատականության մտքի և ձեռքի կնիքը, որի առեղծվածն ու խորհուրդը, թերևս, քրիստոնեական գաղափարախոսությամբ լիցքավորված ժողովրդական բարոյագիտության հավերժ մոտիվների ինքնատիպ ընթերցումն է:

Արանում և անփութված է Կոմիտաս-վարդապետի ժողովրդի գեղարվեստական ոգու բացահայտման հանելուկն, որը ժամանակի գործոնի պատմական պահանջադրող պահին մարմնավորվեց ազգային գեղարվեստական պոստեմցիալի և գեղարվեստական խոշոր անհատի հատկանիշների խաչասերման մեջ կոնկրետ ժամանակի պահանջներն առաջադրելով այդ պատմական հատվածին ազգային մշակույթի գոյատևման համար անհրաժեշտ երկու կարևորագույն արժեքների ձևով՝ հույս, ժողովուրդ և հավատ, կրոն:

* * *

Արամ Խաչատրյանի ներխուժումը 20-րդ դարի երաժշտական աշխարհը, առաջնահերթ առումով ցնցեց իր ինքնասիպ և անկրկնելի, ընկալումներով և զգացողությամբ բացարձակորեն նոր գեղարվեստական աշխարհով: Սա արևմտյան լսարանի համար երբևէ չճանաչված, բայց և միևնույն ժամանակ այլ չափանիշներով արևելցուն նորովի բացահայտման իր որակի մեջ սինթետիկ և կոմպլեքսային աշխարհընկալմամբ, խոր և բազմակողմ գեղարվեստա-կերպարային մի ողջ համակարգ էր: Համակարգ, որի արժեքն առաջնային առումով, նրա գեղարվեստական ճշմարտության մեջ էր, որը նույնքան ճշմարտացի վերամարմնավորում էր գտել ինտոնացիոն-մտածողական ոլորտում: Սա իհարկե երաժշտական ֆեյնոմեն էր, այս հասկացության ողջ բովանդակության համակարգային խորությամբ, ճանաչելի ամենահակիրճ ինտոնացիաներում անգամ:

Ակնհայտ է, որ որքան այս երևույթն արվեստագետի անկրկնելի անհատականության արյույունք էր, նույնքան և այն հարուստ ազգային գեղարվեստական մտածողական պոստեմցիալի արգասիքն, որի ժառանգն էր դարձել Խաչատրյանը: Դժվար է միանշանակ գնահատել իր որակում բազմաշերտ, պատմական տարբեր՝ հաճախ իրարամերժ և հակասական ազդեցություններով, կուտակումների կառուցվածքային բարդ այդ զանգվածը, որտեղ, սակայն, արտակարգ երջանիկ մի բերումով պատմականորեն սինխրոնացվում են և պատմակիզակետում միաձուլվում սուբյեկտիվ և օբյեկտիվ նշանակության մի քանի որակի միտումներ՝ դարաշրջանի և ժամանակի, լոկալ-ազգային մշակույթի արևմտաեվրոպական արվեստի, ինչպես և սովետական մշակույթների, ստեղծելով իր ընդգրկունների մասշտաբով գեղարվեստական ուժի պոթելման աննախընթաց մի էֆեկտ:

Արամ Խաչատրյանի գեղարվեստական աշխարհն ձևավորվել է հազարամյակների ընթացքում՝ ճիշտ այնքան, որքան չափում է իր պատմական ուղին հայ ազգային երաժշտական և ոչ միայն երաժշտական մշակույթը, քանզի Խաչատրյանի մտածողական հորիզոնները իր ընդ-

գրրկումների սահմաններում և տարողունակությամբ, անկասկած, առավել լայն են, քան մեկ արվեստի ձևի հնարավորությունները: Սակայն, երկար ու ձիգ այդ դարերի ընթացքում գեղարվեստական նման ամբողջականություն, իր սինթետիկ և մտածողական ինտեգրացիայի՝ որակով պատմականորեն ընտրեց հենց այն պահը, որը պայմանավորվում էր երկու կարևորագույն գործոններով՝ շրջապատով և ժամանակով:

Այս չափանիշները դարձան այն պարարտ հենքը, որի վրա հնարավոր դարձավ Արամ Խաչատրյանի անկրկնելի ուժի գեղարվեստական մտածողության պտոթկումը:

Ինչ առումով էլ որ արժեքավորենք Խաչատրյանի ստեղծագործությունը, անկասկած, առաջին չափանիշը նրա ազգային էությունն է: Նրա ողջ բարդ մտածողական համակարգը սիստեմավորվում և կարգավորվում է միմիայն ազգային ընկալման տեսանկյունից: Սակայն, Խաչատրյանը չէր կայանա իբրև լիարժեք առումով ազգային արվեստագետ, եթե նրա հայկականի մեջ չլիներ, դարձյալ դարերով կուտակված, գեղարվեստական փորձով բերված այլազգի մշակութային նվաճումների բնական ընկալման և այնուհետև ազգային մտածողությամբ յուրացման և սեփականացման մեծ փորձը: Այս հանգամանքն արդեն հայ մշակույթին ընծայում է յուրահատուկ որակ, քանզի նման-հակամետ (նկատի ունենք Արևելք - Արևմուտք) միտումներով մշակութային փոխազդեցությունները սովորաբար տեղի են ունենում և ունեցել են պատմական ժամանակների շերտավորման ձևով, մինչդեռ դրանց ժամանակի մեջ ստրետային խտացումն ինքնին նոր որակ է ստեղծում, ինչը հայ ազգային մշակույթի հիմքն է և ապահովում է նրա սինթետիկ մտածողական հենքը:

Այլազգի մշակութային նվաճումների նկատմամբ լրջմիտ հետաքրքրության արմատներն, այսպիսով, խորակում են դարերի մեջ և հետզհետե վերաճում մտածողական որակի: Պատահական չէ, որ Արևելյան տարածաշրջանում մեր մշակույթը մինչ Խաչատրյանը արդեն ունեցել է պատմական նմանօրինակ գեղարվեստական սինթեզի փորձ հանձնես Մայք-Նովայի: Պարզապես ժամանակի և աշխարհագրական ընդգրկումների հնարավորությունները այս երևույթը սահմանափակել են Կովկասի սահմաններում: Մինչդեռ կարևորը, առաջնայինն այստեղ պիտի համարել սկզբունքայնորեն երևույթի հնարավոր դրսևորման փաստը:

Խաչատրյանի հայ երաժշտական մշակույթի՝ իսկ՝ նրա միջոցով նաև Արևելքի հետ կապերի բարդ հանգույցի մեջ առանձնանում են երեք հիմնական զանգված՝

ա) Արևելք ինչպես գեներտիկորեն պայմանավորված պոտենցիալ պատմական ինֆորմացիա,

բ) Արևելք՝ օրիենտալիզմի ավանդույթների ընկալման նրգասիք,

զ) Արևելք՝ հայ ժողովրդական և պրոֆեսիոնալ երաժշտական մշակույթների ընկալման միջոցով:

Այս երևույթի կոմպլեքսային ամբողջականության գերարտափայտման համար հսկայական նշանակություն է ձեռք բերում և Խաչատրյանի քաղաքային ավանդույթի երաժշտական մտածողության և հատկապես բազմազգ քիֆլիսյան մթնոլորտում անկաշկանդ երաժշտական մտածողության ձևավորման գործոնը, իբրև կրկնակի ինտեգրացիայի ենթակա երևույթ: Խաչատրյանի գեղարվեստական-մտածողական համակարգը ձուլվում է բազմաշերտ սինթեզի բազմապատկման եղանակով, որտեղ առաջինը՝

ա) կովկասյան մակարդակն է, այնուհետև շարունակաբար՝

բ) քաղաքային մակարդակ,

գ) արևելյան-ռեզիոնալ,

դ) արևմտյան-օրիենտալ,

ե) ռուսական-օրիենտալ,

զ) ազգային պրոֆեսիոնալ մակարդակով,

և վերջապես, իբրև բարձրագույն գեղարվեստական ընդհանրացման մակարդակ հառնում է արվեստագետի անհատականությամբ ամփոփված գեղարվեստական օրգանական սինթեզը:

Այսպիսով, Արևելյան - Արևմտյան սինթեզի հիմնական փուլերը հայ ազգային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման ճանապարհին կարելի է նրվագծել իբրև. -

Չուխաջյան - եվրոպական բազմաձայնություն, նոր ժանրային մըտածողության ձևեր, Արևմտյան - Արևմտահայ սինթեզ,

Կարա-Մուրզա - խմբերգային բազմաձայնություն, Արևմտյան - հայ սինթեզ,

Եկմալյան - բազմաձայնության ներթափանցում հայ հոգևոր երաժշտության մեջ,

Ն.Տիգրանյան - Արևելյան ցիկլիկ ձևերի մեկնաբանում եվրոպական նվագախումբ միջոցով,

Կոմիտաս - ազգային ինքնատիպ սինթեզ ներքին հնարավորությունների վերարտադրությամբ,

Մալեդիարյան - նոր՝ սիմֆոնիզմի գեղարվեստական մտածողական հորիզոնների յուրացում:

Այս հեռանկարում Խաչատրյանի ստեղծագործական գեղարվեստական մակարդակի երևույթն ազգային-լուսալ արվեստի մեջ բնականոն է և հետևողական:

Արևելյան մտածողության մեջ ազգայինի հնարավորությունների ընդլայնված ընդհանրացման գեղարվեստական նոր մակարդակի վրա ճշմարտացիորեն մեկնաբանման երևույթը սկզբունքայնորեն նոր հորի-

գոններ էր ուրվագծում ոչ միայն ազգային մշակույթի, այլև համամարդկային գեղարվեստական մտածողության սահմաններում: Սրանում է, քերև, Խաչատրյանի գեղարվեստական աշխարհի նորովի բովանդակության հեռանկարային նշանակությունը և արժեքը: Մյուս կողմից, նմանօրինակ գեղարվեստական երևույթի հնարավորության փաստն իր դրսևորման մեջ պահանջում է մեկ այլ անհրաժեշտ պայման ևս: Դա ժամանակի ամենաորոշ գործոնն է: Դա ոչ միայն պահանջում էր ազգային մշակույթի ներքին ռեսուրսների բնականոն հասունացում, այլև ընդհանուր առումով, այդ ժամանակի միտումների մեջ ներդաշնակորեն ներհյուսվելու նախապայման:

Դժվար է պատկերացնել ավելի դժվարին և հակասական մի ժամանակաշրջան, քան 20-30-ականները սովետական արվեստի համար, երբ պատմական նվաճումների արժեքները և նշանակությունը ծայրահեղական հայացքների դատաստան էին ապրում, երբ ժամանակի գեղարվեստական արտացոլման ձևավորման ուղիները ընթացքի և խմորումների մեջ էին: Միևնույն ժամանակ, դժվար է նաև քերագնահատել այդ տասնամյակների արտակարգ հեղաշրջիչ, եռանդուն, նպատակամետ ոգին, որը համահնչուն գունվեց Խաչատրյան-արվեստագետի անհատականության ներքին մղումներին և միտումներին, ժամանակային արագացում հաղորդելով նրա գեղարվեստական մտածողության ձևավորման ընթացքին: Խաչատրյանի գեղագիտական ընդհանրացման ուժը կայանում է դեռևս չբյուրեղացած իրականության արտացոլման ձևերի գեղարվեստական կանխագուշակման մեջ: Դրանում ամփոփված էր Խաչատրյան-արվեստագետի դիմամիկ անհատականության էությունը, որն իր մեջ էր առել նրա հախտուն ժամանակի մի քանի բնորոշ հատկանիշներ, որոշ առումով պայմանավորված և ժամանակի կազմավորման արագություններով, կյանքի ընկալման և ընդգրկման, ինֆորմացիայի և պոտենցիայի սինթեզի մեջ:

Խաչատրյանի գեղարվեստական դիրքորոշման և անհատականության ձևավորման ժամանակային գործոնի կարևորագույն չափանիշի արդյունավետ համընկման օգտին է խոսում 20-30-ականների նրա մյուս ժամանակակցի՝ Մարյանի հետ գեղագիտական համադրումը, իբրև արվեստի մեջ բազմաթիվ առումներով իդենտիկ երևույթ: Հիմնական ընդհանրությունը՝ գեղարվեստական մտածողական մակարդակով Արևելքը ամբողջական-գեղարվեստական բարձունքի համակարգ մեկնաբանելն է: Այն, ինչ Խաչատրյանը պատմականորեն անդիմադիր և համոզիչ իրագործեց 30-ականներին, և լսելի եղավ բազմաբովանդակ լարանների համար, 10-ականներին Մարյանը կատարում էր դժվարին խոչընդոտների հաղթահարման ուժով: Ժամանակի, Արևելքի և Արևմուտքի ընդհանուր միտումները կիզակետվեցին 30-ականներին և այս պատմական

պահը դարձավ հայ արվեստի համար աննախընթաց վերելքի ժամանակաշրջան:

Խաչատրյանն իր գեղարվեստական աշխարհի առումով, անկասկած, առաջին մոտեցման չափանիշով մնում է ազգային մշակույթի ժառանգորդ:

Երկրորդ չափանիշով՝ դա ընդհանուր կովկասյան գեղարվեստական-մտածողական ֆենոմենն է:

Եվ, վերջապես, երրորդ շրջանով՝ դա ընդհանուր Արևելյան մտածողական մակարդակի երևույթ է: Այստեղից և բնականորեն դուրս է բերվում հետադարձ կապի փոխադարձ երևույթը նույն համակարգով՝

ա) ազգային

բ) կովկասյան

գ) Արևելյան ընդհանուր:

Նման ընդլայնված գեղարվեստական աշխարհ՝ ամփոփված մեկ ազգային մշակույթի մտածողական օրինաչափությունների մեջ և թույլ է տալիս բացահայտել Խաչատրյանի ինքնատիպ-ազգային մտածողության անվերապահ ընկալման երևույթն առանց բացառության բոլոր լսարանների կողմից, ընդ որում և՛ լայնակի, և՛ երկակի կտրվածքներով:

Դա և դարձնում է նրան համամարդկային արժեք:

Այս տեսանկյունը թույլ է տալիս նաև Խաչատրյան-արվեստագետի գեղարվեստական աշխարհի արտացոլման և ընկալման երևույթը բացահայտել իր ժամանակի, ազգային ժամանակի և պատմական ժամանակի ընդհանուր կտրվածքում:

Այսպիսով, հայ պոռֆեսիոնալ երաժշտական մտածողության ճանապարհին բևեռվելով երեք խոշոր գագաթների վրա, հնարավոր է ընդհանրացնել ազգային մտածողության առաջատար դոմինանտ բաղկացուցիչները, որպես դիմորոշ՝ յուրաքանչյուր դեպքում հարստացված և շերտավորված ժամանակի և անհատականության գործոնով: Դա ոգեղեն լուսերգության պրիմատն է օպտիմիզմի և գեղոնիզմի հեթանոսական ժառանգության, ինչպես նաև քրիստոնեական հույսի և հավատի կայուն մտածողության ընդհանրացման ամբողջական զանգվածի մեջ: Հենց այս կոմպլեքսի հետևանքով է առանձնանում Կոմիտասի պատմական արժեքն անգամ այս եռյակի սահմաններում: Ամուր, բայց և ճկուն պոտենցիալի հետևանքով պատմական բախտորոշ պահերին, հուժկու անհատականություններին ասպարեզ մղումը յուրաքանչյուր անգամ ի գործ է գտնվել ճշգրտորեն կողմնորոշվել և իրագործել Արևելք - Արևմուտք խաչուղիներում միակ ընդունելի, պահին համապատասխան գեղագիտական լուծումը, ստեղծելով դրանով ազգային ավանդական մտածողության մեջ կենսակայուն շարունակականության տրամաբանական շղթա:

ԱՆՆԱ ԲԱՐՄԱՄՅԱՆ

*ՌՈՍԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ:
ԷՋԵՐ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

Աշխատանքային սխրանքներով, բազում դժվարությունների հաղթահարումներով, որոնումներով և ակնառու ձեռքբերումներով անցած տասնյակ տարիներ: Ձեռքբերումներ, ոյունք ժամանակի ընթացքում իրավունք ընձեռեցին Կոմիտասի անվան կոնսերվատորիան ճանաչելու որպես Խորհրդային Միության առաջատար կոնսերվատորիաներից մեկը:

Կոնսերվատորիային նախորդեց երաժշտական ստուդիայի հիմնումը, որն իր վրա վերցրեց առաջին քայլերի ողջ ծանրությունը:

1921-ին Հայաստանի կառավարության որոշումը Երևանում երաժշտական ստուդիա հիմնելու մասին, երկրում տիրող սոցիալ-տրնտեսական մակարդակի և կազմակերպված գեղարվեստական մշակութային կյանքի բացակայության պայմաններում մեծ, եթե չասենք հանդուգն, սխրանք էր, որի իրականացումը պահանջում էր հայրենիքին ծառայելու անձնուրաց նվիրյալներ: Այսօր մեր բարոյական պարտքն է հիշել այդ երախտավորներին և մեր երախտապարտության խոր զգացումներն արտահայտել նրանց կատարած գործի առջև:

Ստուդիայի հիմնումը պահանջում էր, որ գործի գլուխը կանգնած լինի երաժշտական մեծ հեղինակություն ունեցող, ժողովրդի լուսավորության գաղափարով տոգորված, կազմակերպչական ձիրքով և անհողորդը կամքով օժտված անձնավորություն: Հայաստանի լուսավորության կամխարը Երևան հրավիրեց Ռոմանոս Մելիքյանին: Դժվար թե կարելի էր ավելի ճիշտ ընտրություն կատարել:

Ռոմանոս Մելիքյանը, ադ անգուզական արվեստագետը, հայրենիքին ու ժողովրդին ծառայելու, երկրում երաժշտական կյանքի կազմակերպման, ժողովրդի երաժշտական լուսավորության գաղափարներով ոգեշնչված, եկավ Երևան և նետվեց կյանքի հորձանուտը: Մելիքյանի առավելությունն էր նաև ժամանակի ոգու և պահանջների սուր զգացողությունը. «ժամանակը չի սպասում, կյանքը առաջ է թռչում հարյուր մղոնանոց քայլերով, շուրաքանչյուր ժամանակաշրջանն ունի իր խնդիրները և պահանջները: Արվեստագետը պարտավոր է ընթանալ իր դարի հետ, մենք պարտավոր ենք տալ նոր ժամանակաշրջանին համապատասխան գործեր, եթե չենք ցանկանում ետ մնալ կյանքի պահանջներից»: Այս տողերը Մելիքյանի համար լույ խոսքեր չէին, այլ ողջ կյանքի ապրելու ու գործելու սկզբունք:

Ստուդիան ծնվեց երկունքով: Ամբողջ աշխատանքը, կապված և գուտ ուսումնական հաշցերի, և նյութական հիմքի ստեղծման հետ (գործիքների, կահույքի, նոտաների և այլ պիտույքների) դրված էր Մելիքյանի ուսերին: Բավական է պատկերացնել, թե որքան ճիգ ու ճարտասանությամբ պետք է գործադրեր նա, որպեսզի համոզեր ունևոր երևանցիներին իրենց դաշնամուրը տալու ստուդիային (մեկը չէ, չորսը): Մտեփան Չորյանը հիշում է. «... Ռոմանոսը լինելով ստուդիայի դիրեկտորը, ահազին ջանք ու եռանդ գործադրեց այդ ստուդիան կազմակերպելու և բարեկարգ վիճակում դնելու համար: Նա այդ գործով խանդավառ էր այն աստիճան, որ բեռնակիր մշակների հետ անձամբ ոչ միայն մանր իրեր, այլև դաշնամուր, սեղաններ ու աթոռներ էր տեղափոխում իր դպրոցը ... և կարճ ժամանակում ստուդիան դարձրեց ամենաօրինակելի հաստատությունը Երևանում՝ իր կահավորումով, մաքրությամբ, կարգապահությամբ:

Մյուս կողմից, - շարունակում է Չորյանը, - նա շարունակ ինտելիգենցիայի շրջանակում պրոպագանդում էր իր ստուդիայի կարևորությունն ու անհրաժեշտությունը, հաճախ ստուդիայի շրջանակում կազմակերպում էր երաժշտական երեկոներ, հրավիրելով պատասխանատու աշխատողներին և ինտելիգենցիային՝ իր աշակերտների առաջադիմությունը տեսնելու:

Եվ այսպիսով, դարձյալ կարճ ժամանակում, կարողացավ իր ստուդիան շրջապատել հասարակական լայն խավերի սիրով ու համակրանքով»:

1921 թ. դեկտեմբերի 22-ին ստուդիան բացեց իր դռները դիմորդների առջև: Ի նշանավորումն այդ իրադարձության Մ.Մարյանը գրատախտակի վրա գծեց նոտային հնգագիծ:

Ստուդիան ուներ երկու բաժին՝ «Ակադեմիական» (դաշնամուրի, ջութակի, թավջութակի և երգեցողության դասարաններ) և, այսպես կոչված, «Ընդհանուր կրթական», ուր պատրաստում էին երգ-եքաժըշտության մասնագետ ուսուցիչներ հանրակրթական դպրոցների համար և, ինչպես Ռոմանոսն էր ասում, «մասսովիկներ», որոնք պետք է զբաղվեին ժողովրդի լայն խավերի երաժշտական լուսավորության, ինքնագործունեության տարածման խնդիրներով:

Մելիքյանն իր շուրջը համախմբեց երաժիշտների մի ոչ մեծ խումբ, որը խանդավառված նրա ոգևորությամբ, մեծ նվիրումով տրվեց հայրենամեղեր գործին, դիմակայելով կենցաղային ամենաաննպաստ պայմաններին: Այդ նվիրյալներն էին՝ դաշնակահարներ Աննա Մնացականյանը և Հովսեփ Մադաթյանը, ջութակ դասավանդում էր Լևոն Միրզա-Ավագյանը, թավջութակ՝ Վիկտոր Ավետիքյանը, երգ՝ Ռոմանոսի կինը և օգնականը՝ բարձրարվեստ երգչուհի և դաշնակահարուհի Արուս Բաբայանը: Ինքը, Ռոմանոսը դասավանդում էր երաժշտության տեսություն և սոլֆեջո:

Հաջորդ տարի Մելիքյանը Նոր Նախիջևանից հրավիրում է ջութակահարներ Ավետ Գաբրիելյանին և Դավիթ Սողոմոնյանին: Վերջինիս հղած նամակում գրում է՝ «Նորից եմ խնդրում ու գրում, որ մինչև սեպտեմբերի 1-ը լինես մեզ մոտ, որպեսզի միասին անցնենք գործի: Բեզ այդքանը կատես, որ կվերածնվես միանգամայն և հավիտյանս շնորհակալ կլինես ինձնից:

Այս 5-6 ամսվա ընթացքում հազիվ թե մի երկրում արած լինեն այնքան բան, ինչ արել ենք մենք այստեղ, մի քանի մվիրված մարդկանցով և առաջիկայում ունենք այնպիսի լուրջ գործեր, որ դու նույնիսկ կգարմանաս: Բավական է հիշել, որ սեպտեմբեր-հոկտեմբերից, ամիսը 2-3 անգամ «Պատմական կոնցերտներ» ենք տալու (սկսած Օռլանդո Լատոյից մինչև Ռավել)»:

Այդ «Պատմական համերգների» նպատակն էր աշակերտներին ներարկել սեր դասական երաժշտության, գեղեցիկի նկատմամբ, ձևավորել նրանց ճաշակը:

Առաջին իսկ օրից ստուդիայում աշխատանքն ընթանում էր լայն ընդգրկումով: Մելիքյանի խոր համոզմամբ, ստուդիան չպետք է սահմանափակվի երաժշտական կատարողական բնագավառով: Նրա սրբազան պարտքն է նաև ժողովրդական լայն զանգվածների, երաժշտական լուսավորության նույնքան կարևոր գործի կազմակերպումն ու զլխավորումը: Այդ նպատակով ամռան արձակուրդների ժամանակ «ընդհանուր կրթական» բաժնի աշակերտները (հետագայում կոնսերվատորիայի ուսանողները) գործուղվում էին տարբեր շրջաններ՝ կազմակերպելու երգչախմբեր, սովորեցնելու երգեր և հանդես գալու համերգով: Բացի այդ նրանք պետք է ժողովրդական երգեր հավաքագրեին կորստից վրկելու համար: Այդ գործի մանրակրկիտ նախապատրաստական աշխատանքը ղեկավարում էր Մելիքյանը: Միայն նրա բարի երթի մաղթանքը ստանալուց հետո աշակերտները մեկնում էին և ցրվում Գորիսից մինչև Լոռի: Այսպիսով Մելիքյանը մեկ կողմից լուծում էր ժողովրդի մեջ երաժշտական լուսավորության տարածման հարցը, մյուս կողմից՝ իր սաների մեջ սերմանում էր քաղաքացիական պարտքի զգացողություն, նրանց ներշնչում, որ. «Ով զրկված է հասարակական կյանքի իմպուլսից և եռուն կյանքի առօրյայից, նա չի կարող ստեղծել մեծ գործեր, դարաշրջանն անմահացնող գործեր, որովհետև արվեստը՝ դա ինքը կյանքն է, իր բազմաթիվ և բազմապիսի երևույթներով, որոնք բեկվելով ստեղծագործողի ներաշխարհում ստանում են յուրահատուկ ձև և կերպարանք...»:

Ստուդիայի, ապա կոնսերվատորիայի, պարտականությունն էր նաև Երևանի հասարակության երաժշտագեղագիտական դաստիարակությունը: Ստուդիայի դասատուները հանդես էին գալիս բաց համերգներով՝ դասական և հայ երաժշտության ծրագրով: Այդ համերգները մեծ ժողովրդականություն էին վայելում: Մելիքյանն ասում էր. «Առանց

երաժշտական հասարակության չի կարող զարգանալ ստեղծագործական միտքը, առանց պահանջի չի կարող լինել արտադրանք: Նախ պիտի՝ պատրաստել երաժշտությունը սիրողներին, որոնց հետ միայն ստեղծագործական միտքը առաջ կընթանա հախուռն քափով»:

Ինքը՝ Մելիքյանը կազմակերպում և ղեկավարում էր բազմաթիվ ինքնագործ երգչախմբեր (մանկական և մեծահասակների): Այդ գործը մեծ քափ ստացավ 1927-ից, երբ նա Հայաստանի կառավարության հրավերով կրկին Երևանում էր: Բարձր համաբույժ ուներ 1924 թ. նրա կազմակերպած և ղեկավարած կոմսերվատորիայի երգչախումբը: Չի եղել մի տոն, հասարակական միջոցառում, որին նա մասնակցած չլիներ, թե որպես կազմակերպիչ, թե որպես կատարող (խմբավար):

Ստուդիայի 1-2 տարվա արգասաբեր աշխատանքը հնարավորություն ընձեռեց 1923 թ. հոկտեմբերի 1-ին ստուդիան վերափոխել կոմսերվատորիայի: Լուսավորության ժողկոմիսար Ա.Մոսվյանին ներկայացրած զեկուցագրում գրված էր. «Հայաստանի ժողովրդական կոմսերվատորիան, երաժշտական միակ հիմնարկը, պետք է դառնա մեր երկրի երաժշտական կուլտուրայի կենտրոնը: Հեռու կանգնած հիմնավանդական ռուտինայից, ժողովրդական կոմսերվատորիան իր ներքին կառուցվածքով ու բովանդակությամբ պետք է կարող լինի գործնականապես լուծելու երաժշտական բազմակողմանի հարցեր և արձագանքել մեր երկրի ամնիջական կարիքներին: ...Այսօրվա մեր հոգատարության առարկան է՝ լայն մասսաներին երաժշտական կուլտուրա պատվաստելը: ...Մակայն ոչ միակողմանի էսթետիկ հաճույքի իմաստով միայն, այլ իբրև մասսայական էներգիայի դիմամիկա, աշխատունակության բարձրացման ուղիք, ոգևորության պոլս: ...Կոմսերվատորիան պետք է պատրաստի «աշխատավորներ» օրգանապես, հոգեբանորեն կապված միջավայրին, աշխատավորներ նվիրված իրենց միսիային»:

Անշուշտ կոմսերվատորիան դեռ բարձրագույն դպրոցի մակարդակից հեռու էր, բայց ուներ խոստումնալից հեռանկար և կրկնվողի վստահությունն ու հավատը ապագայի նկատմամբ: Ստուդիայի և կոմսերվատորիայի հիմնումը ազգային մշակույթի պատմական խոշոր իրադարձություններից էր, որն ապահովեց հանրապետության երաժշտական կյանքի և ազգային երաժշտական ստեղծագործության հետագա զարգացումը:

Ուշագրավ է Մելիքյանի ցամակը Մոսկվայի կոմսերվատորիայի ուսանող Հարո Ստեփանյանին (1923թ. հուլիսի 23-ին). «... Մենք այսօր ունենք հայկական անդրանիկ կոմսերվատորիան: ... Գե ձեզ տեսնեմ, ջանելներիդ, որ շուտ հասնեք ինձ օգնության: Ես արդեն ծերացա, իմ ցանկությունն է նախնական բոլոր աշխատանքները կատարել, որ եկող գործ անող մարդը չմեղադրի ինձ անգործության համար: ... 26 ամիս, առանց հանգստի աշխատելով կամեցել եմ մեր փոքրիկ ստուդիան դարձնել ար-

վեստի վերածնության մեծ հանգրվանը և 26 ամսվա բոլոր էքսպերիմենտները համարյա սպառելուց հետո, այսօր կանգնեցրել ենք կոնսերվատորիան ... բոլորը, բոլորը կանցնի, կմնա միայն այն գործը, որը ջերմացված է սրտի ջերմությանը և հավատի անսասանությանը»:

Պետք է արժանին հատուցել Ա.Մռավյանին, որն ըմբռնումով և շահագրգռվածությամբ աջակցում էր Մելիքյանին:

Կոնսերվատորիայում, ստուդիայի նման իշխում էր աշխատանքային խանդավառ մթնոլորտը, դասատու թե ուսանող ջանում էր ուժերի լարումով ծառայել լուսավոր գործին, Մելիքյանի գաղափարների իրականացմանը:

Կոնսերվատորիայում նույնպես ուշադրության կենտրոնում պահվում էր ուսանողության երաժշտական-գեղագիտական դաստիարակության կարևոր հարցը: Մելիքյանը ասում էր. «Ձարթոճքի այս ժամին մենք պարտավոր ենք մտահոգվել, որ ազատագրվել ենք այն բոլոր գոեհիկոթյունից, թշվառությունից, որ կար մեր մեջ դարերով կիտված: Եվ արվեստը, իբրև ամենատուր ուրազը տաշում է մեր հոգու բորոտված մասերը և բուժում նրան: Եվ մեր կոնսերվատորիան մեկն է այն կուլտուրական հիմնարկներից, որ պետք է մասնակցի կուլտուրականացմանը: Մեր սանը, մեր կոնսերվատորիայի աշակերտը պետք է ամենից առաջ պատրաստ լինի ընդունելու այդ կուլտուրան ... ինքը ոգևորված ազնվացման այդ գաղափարով ... Բութ ըմբռնումները չեն, որ դեկավարելու են կյանքը, այլ այն պայծառն ու լավը, որի համար մարդիկ՝ պայծառ մարդիկ լինում են անձնագոհ»:

1924-ի հոկտեմբերին Մելիքյանը առողջությունը վերականգնելու և ստեղծագործությամբ զբաղվելու համար թողնում է կոնսերվատորիան: Նրանից հետո եկան նոր ռեկտորներ իրենց գաղափարներով, մտահոգումներով ու հեռանկարներով, որոնց իրականացման համար անհրաժեշտ հիմքն արդեն ստեղծված էր:

Այսօր, երբ ետադարձ հայացք ենք գցում կոնսերվատորիայի անցած տարիների վրա, մեր առջև հառնում է նրա հիմնադրի կենդանի կերպարը ոչ միայն կատարած գործով: Մարտիրոս Մարյանի կախարհական վրձնի կերտած դիմանկարից մեզ են նայում խորասույզ, հոգու հզոր կորովը արտահայտող աչքեր, իսկ ընդհանուր պատկերը լրացնում են Ստեփան Չորյանի հիշողությունները. «Նրա քայլվածքը առանձնահատուկ էր՝ թափով, շտապ: Թվում էր, գնում է մեկին օգնելու, մի կարևոր գործի հասնելու, և միշտ լայն շարժումներով առյուծի քաշը թափ տալով: Բայց և այնպես առաջին տպավորությունը, որ ստանում էին Ռոմանոսից՝ այն էր, որ այդ մարդն արտիստ էր, բառիս ամենալավ և ամենալայն մտքով: Այո, նա արտիստ էր ոչ միայն իր արվեստի մեջ, այլև ընկերական կյանքում, կենցաղում, իր տակտով, վերաբերմունքով»:

Փա՛ռք մեր անգուգական Ռ.Մելիքյանին, մեր երախտավորներին:

КАРИНЕ ДЖАГАЦПАНЯН

